



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

304

Դաշնակցություն


Անգամայի բերդ

Քիքիս - 4891

Խթանակը

32

2004



11, 330

XVII²
83 *Марк Роган*
պարունակագիր
պատրի համար

2-24

6 May. 91. Padre

ՆՕԽՑԱՅԻ ԲԵՐԴԸ

፩፻፭፻

ԳԵՐԱՄԱՆԵՐՔՆԻԴ ԹԱՐՂՄԱՆԵԴ

ՓԻԼԻՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ



ՑՈՎՀԱՆՆԻՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԲԵԼԻՆՆ ՓՈՂՈՑ. № 1

1891



ՆՈՆՅԱՅԻ ԲԵՐԴԸ

дозволено цензурою. 12 Марта, 1891 г. Тифлисъ.

(1876թ. „Փորձ“ ամսագրից):

Ես եկայ Կանարի, որ Կապօկորդօի^{*}) նշանաւոր քաղաքներից մինն է: Նա պայտաձև վուուած է Միջերկրական ծովի առջև և ամեն երեկոյ ընդունում է մայր մտնող արեի վերջին նշովները: Երեկոյեան ժամերին ամբողջ գաւառի վրայ այնպիսի լուսթիւն է տարածվում, որ նրան իրաւամբ կարելի է հրաժանակակիր անուանել—la terra degli addii: Յրբէք չեմ մոռանալ այն արեի մուտքը, որ տեսել էի Կանարիից. այդպիսի մի սքանչելի երեկոյի ոչ մի ժամանակ չէր շարժած իմ հոգին:

Երեկոյեան ժամը դեռ նոր էր սկսուել, երբ որ ես Կանարի եկալ: Հետաքրքիր մարդիկ իսկոյն ինձ շըջապատեցին: Նրանց թւում ես

^{*}) Կորսիկա կղզու հիւսիսային ափն է Կապօկորդօն:



32-2014
Ա/32 78156 - սե
Գ/1234-87)

Տիպ. И. Мартirosianца, Орб. ул., д. 1/2.



տեսայ մի լաւ հագնուած երիտասարդ և
հարցը նրան, արդեօք կարո՞ղ էր ման ածել
ինձ փոքրիկ քաղաքում:

—Plaît-il, Monsieur? Ի՞նչ կըհրամայէք,
ասաց նա:

—Միթէ դուք Փրանսիացի էք, հարցը ես:

—Non, Monsieur, je suis Corse—ոչ,
պարոն, ես կորս եմ:

—Ուրեմն ինչո՞ւ իտալերէն չէք խօսում.
միթէ ամաչում էք ձեր պապերի լեզուն գոր-
ծածել:

—Ոչ, պատասխանեց երիտասարդը: Ես մի
եսոն անֆան—լաւ տղայ եմ և բնաւ չէի
ցանկալ դէսագրեալե—անհաճելի երևնալ ձեզ.
բայց որովհետև վարժապետի որդի եմ, ուստի
ամենից առաջ պարտական եմ կատարել աղ-
դային կրթութեան պաշտօնէի հրամանները,
որոնց իմաստն այս է, թէ ամեն մի կորս պար-
տաւոր է Փրանսերէն խօսել: Այս պատճառով
որքան էլ ինձ regrettable—ցաւալի լինի իտա-
լերէն մոռանալս, այնու ամենայնիւ իլ ֆաւ
avec Votre permission զո՞ւ Ես պարէ:

Մարմնիս սառսուռ տիրեց, ասես թէ ես
յանկարծ տեսայ ու լսեցի Գանտէի դժոխքում

նկարագրուած այն երկու հրէշներին, որոնք
միասին խառնուելով մի այլանդակ պատկեր են
կազմում:

Զարմանք է, որ ո՞րտեղ էլ ոտք դնէ ֆրան-
սիացին, ամեն բան կըքանդէ և ոչ մի բան չի հիմ-
նիլ: Այսպէս նրա իշխանութեան ներքե հին
կորսիկան կորչում է և տեղական լեզուն մի
ատելի, զգուելի և անարդ բան է դառնում:

—Հեռացէք ինձնից, գոչեցի ես երիտա-
սարդին կոշտ ձայնով և աղդու շարժմունքով:
Տղամարդը վրաս շիլ շիլ նայեց—որոհետև կոր-
ուերը, ինչպէս յայտնի է, դիւրաղրդիու մարդիկ
են,—և դնաց մի բան վնթվնթալով: Այդ մի-
ջոցին ես աչքերս մի ծերունու վրայ ուղղեցի,
և հարցը նրան մտերմաբար.

—Բարեւ, հայրիկ. քանի տարեկան ես:

—Ե՞ս. ինսսունչորս տարեկան:

—Ինսսունչորս:

—Այս. վերջին մարտից սկսած:

—Եւ դեռ ոտքերդ շարժվում են:

—Ֆաղը էք անում, ինչ է, պարոն: Առա-
ւոտները Բաստիա գնալն և երեկոները տուն
վերադառնալը ինձ համար ոչինչ բան է, միայն
թէ աչքերս սկսել են թուլանալ, և այս է
պատճառը, որ ահա երեք տարի է՝ որսի չեմ
գնում: Աւելցուր, որ հէնց այդ միջոցին էլ իմ

Պասքալը մեռաւ: Նրա զերեզմանը փորելիս ես հրացանս հողի մէջ դրի. այժմ սպասում եմ, որ կեանքս վերջանալ և ես էլ գնամ միանալու որդուս հետ և էլ երբէք չբաժանուիմ նրանից:

— Աւրեմն դու մայրենի լեզուն ուրացող-ներից չես: Գեղ չեն կապել ֆրանսերէնով, ինչպէս որ կապում են գերուն շղթայով:

— Ի՞նձ: Ես միշտ կռուել եմ ֆրանսիացոց դէմ թէ ծովի, թէ ցամաքի վրայ, և միշտ էլ յաղթել եմ:

— Միթէ, ասացի ես, կարծելով թէ մի տկարամիտ մարդու հետ գործ ունիմ. սակայն նա հանդիստ շարունակեց.

— Ես պատերազմել եմ իբրև ծովալին զինուոր մի անգլիական նաւի վրայ Աէն-ժան դ'Աքրի մօտ, լորդ Աէլմուրի ձեռքի տակ. յետոյ ֆրաֆալգարի մօտ, ուր ընկաւ նիլսօն ծովակալը. այժմ ապրում եմ Անգլիայի կառավարութեան թօշակով: Թէև սա այնքան շատ չէ, որ կարենալի քեֆեր անել, բայց այնքան էլ սակաւ չէ, որ պէտքերիս չբաւէր:

Այսպէս զրուցելով մենք հասանք նաւահանգիստն և մօտեցանք մի եկեղեցու, որի հին պատկերը, ինչպէս և մեր աղքալին պատմութեան ամեն մի նշխար, տարօրինակ կերպով սիրոս շարժեց:

— Ում է պատկանում այս եկեղեցին, հարցը ես. ով է սրա շինողը:

— Զգիտեմ, ասաց ալւորը: Կարծեմ ոչ ոքի չէ պատկանում: Նրա մէջ ժամ պատարագ չէ լինում: Տէրտէրը վկայում է, թէ նրան սարակինոսները շինած կըլինին. բայց ես այդ մասին կասկածում եմ, և որովհետև բան չգիտեմ, լուսմ եմ:

— Իրաւունք էլ ունիս կասկածելու, ասացի ես: Որովհետև որմերը, — սրբատաշ, քառակուսի, երկայնաձև, անկիւններում մինի միւսի մէջ պինդ հարստուած քարերը, սրավերջ լուսամուտները, պատերը զարդարող դրուագներն ուշի ուշով զննելուց յետոյ՝ կարող էի. հաստատ ամել, որ եկեղեցին պիզացոց շինութիւն էր: Եւ մինչ ես որմերը հետազոտելու վրայ էի, — աչքէս դիպաւ մի քանդակուած վերնագիր, որ ասում էր, թէ եկեղեցու հիմնադիրը Յակօբո դա Մարէն է — մի կանարացի մեծատուն մարդ, որին Պիզայի հասարակապետութիւնը տուած էր Կապօկորզօի այս և միւս մասերն իբրև աւատ: Աւելի ոչինչ չէր կարելի կարդալ, ըստ որում քարը գաճով ծեփուած էր:

Այս բոլորը լսելուց յետոյ ծերունին տըրտմութեամբ թօթովեց գլուխն և ասաց հառաչելով.

— Տէ՛ր Աստուած, ոչ մի քայլ չեմ կարող
անել, որ մեր քահանաների տգիտութեան և
ապերախտութեան հետքեր չուսնեմ։ Հըմ։
Եթէ դուք այս տեղ մեր Սետէմբըէ քահա-
նաին գտած լինէիք, — նա ուրիշ մարդ էր։
Նա սատանայի պոչն անդամ ցոյց կրտար ձեզ։
պատճառ ամեն բան դիտէր, մանաւանդ հո-
գեոր բաները, — ի՞նչ գիրք էլ տալիք, կրկարդար,
ի՞նչ էլ հարցնէիք — պատասխանը կրտար, և
եթէ Զինաստանից էլ լուր խնդրէիք, — տեղն ի-
տեղը կրպատմէր։ Նա բանն այն տեղ չէր
հասցնիլ, որ եկաւոր մարդը Յակոբօ դա Մարէի
պէս մեծ բարերարի լիշտակը հազիւ հազ ի-
լոյս հանէր գաճի տակից։

— Թէև հիւր, բայց օտար չեմ, ասացի ես
խփելով ծերուկի ուսին։ ձեր իշխաններից
զատ՝ ուրիշ օտարներ չկան այս տեղ։

Յետոյ շարունակեցի ճանապարհս, որով-
հետև հետաքրքրութիւնս քաշում էր ինձ դէ-
պի մի հին ու շատ մեծ պալատ, որ հսկալի
պէս մենակ կանգնած էր մայր մտնող արևի
ստուերում մի առանձին ժայռի տակ՝ փոքր ի՞նչ
հեռու քաղաքից։

— Այս այն հռչակաւոր պալատն է, ասաց
ծերունին, ուր Սետէմբըէ քահանան դերի էր
բռնել Յիսուս Քրիստոսին։

Ես կարծեցի, թէ բարեսիրտ ալեորիս խելքը
իրաւ փոքր ինչ թուած կըլինի։ Սակայն նա լըր-
ջութեամբ շարունակեց խօսքն և ասաց։

— Պատճածս թող հրաշք ըլթուի. կամ
նթէ զարմանում էք, ես ամեն բան կըբացա-
տրեմ ձեզ ընթրիքի ժամանակ, միայն թէ
համբերէիք։

Հաւանեցայ այդ առաջարկին, և այսպէս
ծերուկիս ուղեկցութեամբ զնացի իմ Մարիան-
նա տանտիկնոց մօտ. սա մի պատուական կին
էր, որի քաղցր հիւրասիրութիւնը միշտ շնոր-
հակալ սրտով պիտի լիշեմ։

Ես նստայ սեղանի մօտ և հրաւիրեցի
ալեորին, որ նա էլ հազորդ լինի ընթրիքիս։
Սակայն նա հրաժարուեցաւ, ասելով թէ իբրև
ծեր մարդ սովոր է ժուժկալ լինել առողջու-
թիւնը պահպանելու համար, և թէ չէ կարող
ուտել ու պատմել միանուագ։

Նա միայն թժնեց իւր կոկորդը, մի բա-
ժակ ու ա ս պ օ կրցուած պատուական գի-
նուց խմելով, որի համը երևի թէ ստէպ չէր
տեսնում։ Պատճառ այնտեղ էլ, ի՞նչպէս այլուր,
խաղողի հիւանդութիւն էր երկեցել, և ս աւելի
սաստկացնելով ժողովրդի տառապանքը, որ ա-
ռանց այն էլ բաւական դառն էր։ Գինին
խմելուց յետոյ նա սրբեց շրթունքը, դարձաւ

գէպի ինձ և սկսաւ պատմել գրեթէ բուն տոս-
կանեան բարբառով.

—Թէ ինչո՞ւ են Ազոստինօ Սիլվարէչիօ քա-
հանացին Սետէմբրէ մականունը տուել—կարող
չեմ ասել: Չնայելով որ նա մի նիհար մարդ էր
և վոխտ սրունք ունէր, բայց դարձեալ երկա-
թի պէս ամուր էր: Նրա կանաչ աչքերն այն-
պէս էին վառվում ու պսպլում, որ ասես թէ
կատուի աչքեր լինէին. այս բանով էլ նա կա-
տուի նման էր, որ սև ու սպիտակ խայտերով
մազեր ունէր և կտորով պէս էլ թոշկոտում
էր: Նրա երեսի ձիթագոյն մորթը արևել տա-
պեց կիզուած էր, յօնքերը վարազի խողանի
նման փուշ փուշ էին: Նա քիչ էր քնում, քիչ
էր ուտում և խօսում էր շատ սակաւ: Քիթը
գրեթէ կպած էր կզակին, որովհետև նա սո-
վոր էր յետ քաշել շըթունքն և պինդ փակել:

Երբ որ Պաօլի զօրավարն այստեղ եկաւ
Կապօկորզօն աչքէ անցնելու, նա խկոյն հաս-
կացաւ, որ պատերազմին յաջող ելք տալու հա-
մար անշուշտ պէտք էր այս երկիրը պաշտպա-
նել: Այս պատճառով նա հրամայեց շինել յօն-
ցալի բերդն այն դուրս ցցուող ժայռի վրայ, և
երբ հանճարեղ Ապիանօ Սետէշերվէլի մարտա-
րապետը հրամանը լսելիս զլուխը շարժեց ու
ժպտալով քրթմնջեց, թէ «Մենք սուրբեր չենք,

որ հրաշք զործենք», — զօրավարը բարկացաւ և
ահեղ ձայնով պատառխանեց նրան — Ազա-
տութիւնը կարող է աւելի մեծ հրաշք զործել,
քան թէ նոյն ինքն Ս. Անտոնիոսը:

Գուք կըտեսնէք բերդը. այժմ նա փլած
է. բայց և այնպէս նրան նայելով կըհասկանաք
զօրավարի ասած խօսքերի ճշմարտութիւնը, մա-
նաւսնդ երբ ի նկատ առնէք, թէ որքան ան-
պատսպար էին այն ժամանակ կորսերը: Կօն-
ցա բերդի հիմքը կազմող ապառաժը կախուած
է ծովի վրայ զարհուրելի բարձրութիւնից, իբ-
րև մի սղաւոր ուռի, — և կամարն այնպէս բա-
րակ է, որ մըրբիկները կարող էին քայքայել
նրան: Եթէ փափագ ունենաք ժայռի եղերքին
կանդնելու, կըտեսնէք անդունդի մէջ սև ալիք-
ներ, որոնք կատաղի որոտմամբ սպիտակ փըր-
փուր են դուրս ժայթքում, — և սարսափելով
յետ կըքաշուիք: Վերևելից չէ կարելի տեսնել
ժայռի ստորոտը, որովհետև գիզադէզ կոհակ-
ների անընդհատ հարուածներից նա փորուել է
և զոդ է կազմել լերան մէջ: Հարաւալին կող-
մից, որ այնքան զառիթափ չէ, մի ուղղորդ ճա-
նապարհ է տանում գէպի վեր. իսկ արեմտեան
կողմից որ նայէք, կըկարծէք, թէ առանց
թերի անհնարին է նրա վրայ բարձրանալ,
բայց կաչ հնար բարձրանալու, և մեր քաջերից

ոմանք համարձակվում են մինչև անդամ ձիռվ
անցնել այն անժիւ աստիճանները, որոնք
մերթ վշերի քարափից և մերթ ապառաժների
ետքից ուր մոլոր պտտուելով, տանում են
մինչև այն սոսկալի վիմակոյտի խրոխտ գագա-
թը: Այս քարուտ վերելքի մէջ տեղում կայ մի
աղբիւր, որից մեր կանաչը ջուր են հանում:

Երբ որ բերդի շինութիւնը բոլորովին վեր-
ջացաւ և նա արդէն պատրաստ էր, Պաօլի զօ-
րավարը կանչեց իւր մօտ ծերունի Քիակոմօ Կա-
չէլլա գնդապետին, որ դենուացոց դէմ քաջօ-
րէն պատերազմելիս իւր աջ ոտից զրկուել էր
և ինքն էլ հազար ու մի վերք ստացել, —և
ասաց նրան.

— Հօրեղբայր. Ի՞նչ կ'ասես այս բերդի մասին,
— Կ'ասեմ, որ մի գեղեցիկ և ամուր բերդ է:

— Իմացիր, որ սա ամբողջ Կապօկորզօի-
քանալին է: Տարակոյս չկայ, որ այս բերդը
նուաճելու համար թշնամին ոչ մի բան ինա-
յելու չէ: Բայց ում յանձնեմ պաշտպանութիւ-
նը: Հօրեղբայր—պարզ ու կարճ եմ ասում քեզ—
վստահ ես պաշտպանել սրան, ինչպէս որ
պէտք է:

— Հըմ, հանդամանքներին նայելով, զօ-
րավար: Եթէ դուք հարցնում էք ինձ իբրև
աղքական, կ'ասեմ. Պասքալէ, զօրութիւնս հա-

տել է, ես ծեր մարդ եմ—հաշմ, կաղ ու փե-
ցի. այստեղ նորատի, առոյգ տղամարդիկ են
հարկաւոր. տուէք բերդը որ և է քաջ երիտա-
սարդի: Բայց եթէ զօրավարի պէս էք խօսում,—
կ'ասեմ. Զերդ վսեմութիւն, հրամայեցէք,—
զինուորի պարտքն է լսել ու հնագանդիլ:

— Քիակոմօ, ես խօսում եմ որպէս ազգական
և զօրավար: Ականջ դիր: Երբ այս լեռնոտ ա-
փերի մօտ թշնամու ոռումբերը գոռան, միթէ
կալծում ես, թէ առողջ ոտդ կը համբերէ կանդ-
նած մնալ և չի քաշիլ, չի տանիլ իւր հետ և
քո փայտի ոտը: Սատանան զիտէ, թէ ի՞նչ
հաշմութեան վրայ ես խօսում: Ինչայնու ենք
լոյս տեսել, աշխարհ եկել. արդեօք հանդիստ
վայելելու: Դրա համար դեռ շատ ժամանակ
կ'ունենանք գետնի տակ:

— Տէրս վկայ է, զօրավար, որ խօսքերդ
ճշմարիտ են:

— Ուրեմն բանը վերջացաւ. դու կը պաշտ-
պանես բերդը, չէ:

— Անշնուշտ:

— Զե՛ռդ:

— Ահա ձեզ երկուսն էլ:

Այս կերպով Նօնցայի բերդի ապահովու-
թեան գործը հոգալուց յետոյ՝ Պաօլին հրամա-
յեց ամբողջ երկրում զինակիր վաշտեր կազմել,

որոնք տեղէտեղ շըջելով պիտի պահպանէին երկերը և օգնէին նեղուածներին: Յետոյ նա լսեց, չփիտեմ որ տեղից, թէ մի քանի քահանայ և մանաւանդ կանաբիի քահանան, այնպիսի սկրդբունքներ են քարոզում, որոնք նոյնքան կարող էին դուր գալ նրան, որքան որ ծուխն աչքերին. այսինքն թէ նրանք խաղաղութեան պաշտօնեայ լինելով, չպիտի մասնակցին աշխարհային շփոթներին.—թէ թշնամիներն և ընկերները միապէս քրիստոնեայ լինելով՝ հաւասար օրէնութեան կարօտ են.—թէ Յուրը Գրքի ուսման նայելով՝ մի քահանայ, որ իւր ձեռքերը մկրտուած մարդու արեան մէջ է թաթախում, ոչ միայն դատապարտութեան, այլ և նղովքի արժանի է,—և ուըիշ այսպիսի բաներ: Ասես թէ ամեն բան ապականողները հէնց այդ տէրտէրները չէին: Ասես թէ մարդու տէրտէր լինելուց առաջ իւր հայրենեաց որդին չէ, և կամ թէ այս հայրենիքը բոլոր սրտով չսիրողը նոյնպէս ամբարիշտ չէ, ինչպէս որ ամբարիշտ է և անէնքի արժանի այն մարդը, որ թոյլ է տալիս թշնամուն ոտնակոխ անել իւր երկիրը: Եթէ դուք չէք ուզում այս աշխարհին պատկանել, ուրեմն միւս աշխարհը դնացէք. բայց որովհետև դուք մեր այդիների գինուց էք խմում, միք գաշտերի բերքից էք ուտում,

ինքներդ էլ տան ու պարտէզի տէր էք, ուրեմն դուք էլ պարտաւոր էք մեզ հետ միասին հոգ տանել, որ նրանք չասպատակուին թշնամուց:

Զօրավարը հաստատ որոշած լինելով արմատով հանել այդ որոմը, կանչել տուաւ Սետեմբրէ քահանային և ասաց նրան.

— Տէր հայր, դուք այստեղ կըմնաք և «դանակը կըսրէք»:

Տէր հայրը բարձրացրեց իւր կզակն ու կրկին մուրճի նման վայր թողաւ կուրծքի վրայ: Այդ նշան էր, թէ «Լաւ է, լաւ հասկացայ»: Այնուհետև զօրավարը մի ուրիշ ծուխ տուաւ կանարիի առաջուաց քահանային:

Պէտք է ասեմ ձեզ, սիրելի պարոն, որ հին քահանան, չնայելով իւր թշուառ զպղափարին, թէ հարկաւոր չէ թշնամու դէմ վառօգ ու կապար գործածել, մի բարեսիրտ ու սուրբ մարդ էր և շատ ուրեմն ամենքին, մանաւանդ կանասց դասին: Այս էլ պէտք է ասեմ, որ նրա յաջորդը, հայր Սետեմբրէն այստեղ գրեթէ մի անձանօթ անձն էր, և իւր մասին շրջող լուրերին նայելով՝ մի խենդ մարդ էր համարուած: Ուստի բնական է, որ ժողովուրդը աղմկուէր իւր հովիւների փոփոխութեան վրայ: Եւ արդարեւ շատ չանցած հեռաւոր քամու նման դէս ու դէնից դաղտնի ձայներ հասան մեզ,— տրտունջը հե-

տըգհետէ սաստկացաւ և վերջապէս իմացանք,
որ Սետէմբերէի անունն անգամ չէին ուզում լր-
սել: Իսկ նա ինքն,—կարծես թէ այս բոլոր
յուզմունքը իւր պատճառով չլինէր,—բան չըլսող
էր ձևանում. մի և նոյն է թէ Թօփօնդօ սա-
րին ասէիր—զնա կորիր տեղիցդ:—Երբ որ հա-
սաւ կիրակին, մեծ ու փոքր սկսան խօսել քաղա-
քում, թէ նոր տէրտէրը՝ օրհնութիւն տալուց
առաջ՝ մտադիր է մի քարող ասել,—բայց
սաստիկ քարոզ: Այսպէս ուրեմն ժողովուրդը, նոր
բան լսելու փափագով վառուած, խմբովին եկե-
ղեցի վագեց և ոչ մի կատու տանը չըմնաց: Հայր
Սետէմբերէն այնպէս սկսաւ ժամ ասել, ինչպէս
որ հարկն է, —բայց յետոյ՝ քարոզի բեմը
բարձրանալու փոխարէն, մեր ակնկալութեան
հակառակ, շուրջառը հագին յառաջ գնաց ու
կանգնեց սեղանի առաջև: Գնալիս և ծունը
դնելիս երեսում էր, որ մի բան ծանրութիւն էր
պատճառում նրան. սակայն մենք դրա վրայ ու-
շագրութիւն չդարձրինք, որովհետեւ մեր միտքը
ուրիշ բանով էր զբաղուած: Յանկարծ, tantum
ergo-ն սկսելուց առաջ նա վեր կացաւ, սրբ-
ութիւնը տապանակի միջից հանելով սեղանի
վրայ դրաւ, յետոյ մի կողմ կանգնեց, դարձաւ
ժողովրդին և բոլորավին պարզ ձայնով յետագայ
քարոզն ասաց:

«Գիտեմ, սիրելի որդեակներ, որ դուք շատ
էք սիրում ձեր առաջուայ քահանային, և դո-
փում եմ ձեղ զրա համար, որովհետեւ նա սի-
րուելու արժանի անձն էր.—զիտեմ նոյնպէս, որ
դուք իմ դէմ զրգուուած էք,—և սրա համար
կշտամբում եմ ձեղ: Դուք ուզում էք ծածուկ
մեքենայութեամբ դուրս քշել ինձ կանարիից.
սակայն ես մտադիր եմ այս տեղ մնալ, որով-
հետեւ փափագում եմ ձեղ հետ միասին աղօ-
թել Աստծուն և ձեղ հետ էլ կեանքս զոհել հայ-
րենեաց համար: Երբ որ դուք սակարկութիւն
էք անում զինի կամ իւղ և կամ արմտիք
գնելիս, ասացէք—միթէ ապրանքը մերժե-
լուց առաջ չէք զննում նրան: Ուրեմն մի-
թէ ինձ աւելի ստոր էք դասում, քան ձեր
արմտիքն ու զինին, վասն զի աշա դեռ
չփորձած վունտում էք ինձ: Ես կըցանկա-
լի և հարկէ, որ դուք ինքներդ ինձ լաւ
ճանաչելու հոգ տանէիք. բայց որովհետեւ
այս մասին անփոյթ էք եղել, դէ ուրեմն ես
ինքս չորս խօսքով կըցայտնեմ ձեղ ովկ լինելս:
Յաւիտնից Հայրը, որ իւր օրէնքների տասը
պատուիրանը տուաւ. Մովսիսին, ինձ էլ մօրս
արդանդից տասն հատ պատուիրան տուաւ
որպէս զի ճշգիւ կատարեմ,—տեսէք»:

Այս ասելով նա դէպի վեր պարզեց իւր



Առաջնական առաջնական
Ա. ԱՅԱՍՆԻԿԱՆՆԻ ԱՆԱՄԱ

Առաջնական առաջնական
Ա. ԱՅԱՍՆԻԿԱՆՆԻ ԱՆԱՄԱ

Ճեռքերն և տասն մատը ցոյց տուաւ: Յետոյ
շարունակեց.

«Իմայցէք նոյնպէս, ամենասիրելի որդեակ-
ներ, որ ես էլ ձեզ նման պաշտում եմ երկրն-
քում մի սուրբ Երրորդութիւն. բայց երկրի վրայ
էլ դաւանում ու յարգում եմ մի երրորդութիւն,
և այս երկրային երրորդութիւնից ահսւասիկ
սահ է հալը»:

Եւ նա հանեց շուրջառի տակից մի հրա-
ցան ու դրաւ սեղանի վրայ:

«Եւ սա է որդին»:

Այժմ նա հանեց զրապանից մի ահաղին
ատրճանակ և դրաւ սեղանի մօտ:

«Վերջապէս ահա և սուրբ հոգին»:

Այս խօսքերի վրայ նա բաց արաւ իւր
գօտին ու գուրս հանեց մի դաշոյն, որ նոյն-
պէս դրաւ սեղանի վրայ միւս զէնքերի մօտ:

«Այս խնդիրը պարզելուց յետոյ աղաչում
եմ ձեզ, սիրելիք, որ գուրք շատ չդուռզանաք
իմ տկար լինելս տեսնելով. մտաբերեցէք, որ
պղպեղն էլ չնչին հատիկ է, բայց բերնին համ
է տալիս: Գէհ, կարծում եմ թէ այժմ հասկա-
ցաք ինձ: Ես կարող եմ շատ բաներում պէտք
դալ ձեզ, և Ազստինօ Սիլվարէջիօն միայն մի
բանից երկիւղ ունի այս և միւս աշխարհում,
այն է Տիբէջ պատժից. իսկ մնացեալ բաների

մասին նոյնչափ է դարդ անում, որչափ հե-
րուան վչած քամու մասին»:

Քաջ տէրտէրը այս խօսքերն ասաց թէ
չէ, դէպի սեղանը դառնալով ծունը դրաւ և
երգեց tantum ergo sacramentum, և բոլորն
էլ նրան ձայնակից եղան: Յետոյ օրհնեց ժո-
ղովուրդն և մենք՝ նոր տէրտէրի տուած խրա-
տից սաստիկ շուարած դուրս ելանք տաճարից:
Այսպէս Սետէմբրէ քահանան իւր ազգու վար-
մունքով վկայեց, որ եթէ ստոյդ է առածի
խօսքը, թէ «մողեզին տէրտէրը կատաղի ժողո-
վուրդ կ'ունենայ», — զրա հակառակն էլ ճշմա-
րիտ է: Արովկետև, իրաւ եմ ասում, — հէնց
այն օրից մեր քահանայի բարի համբաւը շուր-
ջանակի մզոն ու կէս տարածուեցաւ ու նրա
յարդն օր ըստ օրէ սկսաւ ամել, և շատ զո-
գանի պատճառներով: Վասն զի որտեղ էլ պէտք
լինէր մի վէրք բուժել, նա Աստծու աջի պէս
իսկոյն հասնում էր օգնելու. իսկ քարոզներին
դալով, վերեւի փոքրիկ օրինակից յետոյ այս
մասին բան աւելացնելու հարկ չկայ: Նրա խօս-
քերը, ուժգին ուժգին հնչելով, պարսաքարի
նման դիալցում էին նպատակին: Եթէ պէտք
լինէր զէս ու զէն զնալ հիւանդներին այց ա-
նելու, — անձրւել, մրրիկն ու կարկուտը ոչինչ
էին նրա համար: Զի որ գտնէր, կըհեծնէր, ե-

թէ ոչ—ոտով կ'երթար: Սրբութիւնը նա ձրի
էր բաժնում՝ փոխանակ վաճառելու, ինչպէս
որ անում են միւսները: Մեզնից ոչ ոք չէ տե-
սել, որ կնունքի, պատկի, և կամ թաղման
ժամանակ նա արծաթ և կամ ուրիշ բան—
նոյն իսկ մի բաժակ ջուր ընդունէր:—Որովհե-
տեւ, ասում էր նա, միայն դրանով կարելի է
զբարտիչների բերանը խցել, որոնք ոչ մի ա-
ռիթ չեն բաց թողնում կրօնի վարկը կոտրելու
և ասելու, ի մեծ վնաս հաւատոյ, թէ սրբու-
թեան միջոցները տէրտէրների ապրանք են դար-
ձել: Ոչ մի բան չպահանջել, այլ ընդհակա-
ռակն, ամեն բան, և նոյն իսկ իւր բերնի հա-
ցը կտրել ու տալ աղքատներին—այս էր նրա
կարծիքով ճշմարիտ քահանայի գլխաւոր առա-
քինութիւնը:—Ուսած եմ Աւետարանից, ասում
էր նա, թէ եմիփորոնը պարտքեր է դնում քա-
հանայի վրայ, և ինչ պարտքեր. իսկ իրա-
ւունքներին գալով, երբէք չեմ զտել Աւետա-
րանի այն տեղը, ուր Քրիստոս դրանց մասին
խօսում լինէր: Պատարազը վերջանում էր թէ
չէ, մեր կտրիճ տէրտէրը, Սուրբ Գիրքը թողած,
վերցնում էր հրացանն և հէնց ժամի առջև,
հրապարակի վրայ, սովորցնում էր համբակներին
միասին կանգնել, ցրիւ վաղ տալ, ճակատ յօրինել,
գունդադունդ յառաջ դիմել, ոգնու պէս ամ-

փոփուելով ոլորակ կազմել, ամեն մի փոսից,
փայտի կրօնզից և կամ վէմից պատնէշ շինել,—
կարձ, ինչ մարզմունք և ուզենաք, —այնպէս
որ պրուսական լիսնապետն էլ կըպատկառէր
նրանից: Բայց ամեն բանից աւելի նա ջանա-
գիր էր ժողովրդի մէջ եղած թշնամութիւննե-
րը վերցնելու, հանապազ հոգ տանելով, որ նո-
րերը չծագէին: Նա անում էր այդ դրդուելով
անշուշտ բարեպաշտութեան զգացմունքից. սա-
կայն պէտք է խոստովանել, որ այդ բնա-
ծին զգացմունքը և՛ս աւելի բորբոքվում էր
յատկապէս այն անհուն սիրուց գէպի հայրե-
նիքը, որ պաշտելի էր իւր համար:

Բարի հովիւն իւր հոգատարութեան գեղե-
ցիկ պտուղները տեսնելով, զմայլում էր հօգե-
պէս, և այն ժամանակ նրա շրթունքի վրայ
ժամանակ նման բան էր փայլում: Սակայն այս
անակնկալ յաջողութիւններից քաջալերուած՝ նա
սկսաւ յետոյ—ինչ որ կարող է ամենախելօք
մարդուն անզամ պատահել—փքանալ ու պար-
ձենալ, թէ ոչ մի ատելութիւն, —որքան էլ
հին արմատներ թողած լինէր, —չէր կարող
նրան ընդդիմանալ: Նրա ձեռքի տակ ամենքն
էլ միմեանց պիտի սիրէին, ամենքն էլ իրենց
հոգու ժահրութոյնը արտաքին թշնամու վրայ
թափէին: Այս բանի ճշմարտութեան համար

նա պատրաստ էր մինչեւ անդամ գրաւ դնել իւր ժամազիրքն ու հրացանը: Ատկայն—լինչքան որ հնար է գատել մարդկալին խելքով— երեռմ է թէ նրա այս հպարտութիւնը լաւ չէր թուել Աստծուն և մեր Տէրը կամեցել էր շօշափելի անել նրան, թէ առանց երկնալին օրհնութեան ինչ էլ որ մարդս դորձէ, ունայն կըլինի: Ալաբէս, երբ մեր քահանան ուղեց հաշտեցնել իրար հետ Օրսանոտօ Ալէսսանդրին և Փրանչէ Օրթիկօնին, իւր գլուխը գրաւ դնելով, թէ նա կըլաջողէր բաց անել այդ իրար դէմ թշնամօրէն փակուած սրտերը,— բանալին կոտրուեց նրա ձեռքում: Ճատ երկար կըտեէր, եթէ ուղենալի մի առ մի պատմել արժանաւոր քահանալի բանեցրած խօսքերն ու հնարները. Հերիք է ասել, որ նա իւր նպատակին չկասնելը տեսնելով՝ բոլորովին վհատած մեղալի եկաւ Տիրոջ առջեւ և հոգու հեգութեամբ խոստովանեց, թէ նա ինքը մի տրուալ ու տխմար էակ է:

Ալժմ տեսէք, թէ ինչ ճանապարհ ցոյց տուաւ Աստուած այն թշնամութեամբ սառած սրտերը հաշտութեան սիրով վառելու համար:

Պաօլի զօրավարը հրապարակալին քարոզի բերնով հրաման էր հանել, որ ամեն մի կորս,

աջն Աւետարանի վրայ դրած, մինչեւ վերջին շունչն իւր հայրենիքը սաշտպանելու երդում տայ քահանալին: Նորերումս ստէպ պարսաւել են այդ միջոցն իրրեւ մի ապարդիւն բան. սակայն ինչքան որ ես ստուգել եմ երկար կեանքիս ընթացքում, ամենախելօք մարդիկն անգամ, վաղեմի բաները չափելիս, իրենց օրով ընդունուած չափն են բանեցնում և ընդունակ չեն հասկանալ հին կեանքի պայմանները: Եթէ ի միտ առնեք կրօնի հզօր աղգեցութիւնը կորսերի վրայ անցեալներում և տեսնէք, թէ ինչ զիտուն և առաքինի անձինք էին մեր քահանաները, և իմանաք, թէ ինչպէս նրանք—իրենց գոյքն ու արիւնը հայրենեաց օգտին զոհելով արժանի էին լինում սուրբերի նման պաշտուելու ժողովը— գից, — այն ժամանակ ինքներդ էլ կըվկայէք, որ զօրավարի արածն այս տեղ էլ, ինչպէս և միւս դէպքերում, ամենամեծ իմաստութիւն էր: Այսօրուան օրս շատերի համար կբօնլ մի փտած կանեփ է, և նրանից շինուած թոկլ սարդի ոստայնից էլ թոյլ բան: Վիակ թոկ շինողը, որ գեռ կարող է բան զօրել— շահն է. սակայն որա մանուածն էլ կտրվում է, և նրա թոկերին ապահնողը շատ անդամ զլիսի վայր ցած գլորվում...

Թէ ինչպէս վարուեցաւ այս դիպուածում հայր Սետէմբերէն, ինքներդ կարող էք զուշակել: Կիրակի օրը, սուրբ պատարագից յետոյ, դեռ զգեստը չհանած, նա առաւ սեղանից Յովհաննու Աւետարանն և հրամայեց իւր որդոց զոյգ զոյգ յառաջ գնալ, ձեռքերը Սուրբ Գրքի վրայ դնել և երդուել իւր տուած օրինակով: Մրդեօք մի լոկ բերմունք էր այս թէ հաշիւ—չգիտեմ. բայց տէր հայրը Օրսանտօ և Ֆրանչէ հինաւուրց ոսոխների անունը միասին հնչեց: Մինը նայեց միւսի վրայ. երկում էր թէ նրանք մի առանձին փափագ չէին զգում հետեւելու տէրտէրի կոչին: Բայց յետոյ վախենալով որ ժողովուրդը նրանց անարժան զաւակ կըհամարէ այն փառաւոր ծնողների, որոնք պանձալի էին հայրենասիրութեան վսեմ զգացմունքով,—և չկամենալով սեղիք տալ կարծելու, թէ նրանց սրտերը բոլորովին քարացել են,—նրանք վղակոթից հրուածի պէս յառաջ դիմեցին ու կանգնեցան սեղանի առջև: Քահանան ըրունեց Աւետարանը նրանց առջև, և երկումն էլ մի մատ դրին զրքի վրայ—մէկն աջ, միւսը ձախ անկիւնից: Ապա թէ տէր հայրը, երկնալին բարկութեամբ վառուած, զիրքը սեղանի վրայ ձգեց և մեղաւորների աշերը սաստիկ իրար սեղմելով, ամուր ձնշեց Աւետա-

րանին: Թշուառների աջերը հողմաշարժ տերևների պէս դողում էին. սակայն Սետէմբերէ քահանան քնքուշների տեսակից չէր,—նա և՛ս աւելի սեղմեց ձեռքերն ու վերջապէս զոչեց ահեղ ձախնով.

—Յանուն անարատ Սուրբ Կուսին. կրկնեցէք, ինչ որ ասելու եմ ձեզ, ով Ալջալօի ժայռի նման քարացած սրտեր: Երդվում եմ—ասացէք—երդվում եմ յանուն չօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ, պաշտպանել հայրենիքս, մինչև որ շունչ մնայ մարմնիս մէջ,—երդվում եմ զոհել նրան թէ իմ և թէ զաւակներիս զուքն ու կեանքը,—երդվում եմ զայթակղութեան օրինակ չտալ և չար զժութիւն չներմանել ոչ խօսքով, ոչ էլ զործով. և եթէ ես այս իմ խոստումը չպահեմ, թող այն բովէին զետինը ճեղքուի ոտքերիս տակ և ես դժոխքի անդունդը զլորուիմ:

Քանի յառաջ էին գնում երկու ծերերն այս երդման մէջ, այնքան էլ նրանց աջերը դադարում էին դողալ ու տաքանում էին. որովհետեւ քէնը սառեցնում, իսկ սէրը ջերմացնում է մարդուս մարմինն ու հոգին: Եւ որքտն յառաջ էին գնում այս երդման մէջ, այնքան աւելի զգում էին, որ կարծես թէ միամար եղբայրներ են, հարազատ եղբայրներ ի Քրիստոս, որ հեղա-

յած էր իւր արիւնը նրանց փրկութեան համար: Նրանց կուրծքերը թնդում էին, շունչը միասին խառնվում. ծունկերն երերվում էին և ասես զե, տինն էլ գողգոջում էր ոտքերի տակ: Նրանց սըրտերի կոշտութեւնը փափկանում էր արտասուքից. բայց արտասուքը դեռ չէր հոսում, այլ հապատ կամակորութեամբ բռնվում էր կոսկերի եղերքին: Նրանց շրթունքն էլ կարծես թէ շարժվում էր համբոլիք տենչով, բայց դեռ իրար չէր դիպչում:

Այն ժամանակ հայր Սետէմբրէն քաջ նրամարելով, որ եթէ բանն այդպէս մնալ, շատ երկար կրտելի, — բունեց ձախ ձեռով Օրսանտօի զլուխը, աշովլ ֆրանչէինը, և այնպէս սաստիկ բախեց իրար, որ նրանք գնդակների պէս դրըմփացին, և ապա ինքն էլ նրանց հետ միասին հեկեկալով, աղաղակեց.

— Գէհ յառաջ. համբուրեցէք մէկ մէկու. Հօ տեսնում եմ, որ ինքներդ էլ հէնց այդ էք կսմենում: Հաշտութիւն, հաշտութիւն, հաշտութիւն:

Պէտք էր տեսնել այն երեքին: Գծուար էր որոշել, արդեօք իրար պաշպչում էին թէ կծոտում — այնպէս բուռն էր նրանց կրքերի թափը, երբ որ նրանք մէկ մէկու վզով փաթաթուեցան գրկախառն: Տէր հայրը համբուրում

էր նրանց զլուխները, և նրա վճիտ արտասուքը կաթիլ կաթիլ հոսում էր հաշտուած ալկորների մաղերի վրայ:

Սակայն Սետէմբրէ քահանան, թէև իւր կեանքում երբէք թուղթ չէր խաղացել, լաւ գիտէր, որ առնելն ու տալը զատ բաներ են և թէ սէրը զըռում, մինչ դեռ քէնը գրոցով է քանդակում: Բաստի նա շատ աշխատեց աղգակցութեան կապերով էլ ամրապնդել այն երկու տան հաշտութիւնը: Այս նպատակով նա առաւ մի օր իւր հրացանը, ֆրանչէլ բակը գնաց ու նստաւ նրա պատուհանի տակ: Ֆրանչէն, որ իւր տունն ու բակը խածան շան պէս պաշտպանել զիտէր և հանաքներ չէր սիրում, վագեց նաև լու պատուհանից, թէ ով է իւր գաւիթը մտնող լիրը. բայց քահանակին տեսաւ թէ չէ՝ բարկութիւնը շիջաւ, և ասաց մեղմիւ.

— Գուք էք, տէրտէր ջան: Խնդրեմ վերև հրամայեցէք և փոքր ինչ ինձ մօտ նստեցէք:

Տէր Սետէմբրէն հրաւէրի կրկնութեանը ըսպասեց, այլ իսկոյն վերև գնաց, մտածելով իւր մտքում. Կարծեմ բանը լաւ է սկսվում. որովհետև տեսնում եմ, որ նա է ինձ պարողը և ոչ թէ ես նրան:

Խօսակցութիւնը սկսուեցաւ եղանակից. լետոյ նրանք լիշեցին անցեալ տարուայ հուն-

ձերի վատութիւնը, այս տարուայ առատութիւնը. բայց տէրոտէրը, խօսքը յանկարծ ընդմիջելով, ասաց.

— Փրանչէ, դուք մի որդի ունիք, կարծեմ:
— Հապա չունիմ. միթէ նրան չէք ճանաչում:

— Հարկաւ ճանաչում եմ. սիրուն կտրիմ և արդէն ալնքան չափահաս, որ աւելորդ չէր լինիլ մի հարս ճարել նրա համար:

— Ժամանակը դեռ չէ անցել. միթէ ըրգիտէք, որ դեռ նոր տասնեւթ տարին լրացրեց:

— Եւ ձեզ այդ քիչ է թւում. իմ կարծիքով պսակուելու ամենալաւ ժամանակը հէնց այդ հասակն է:

— Ի՞նչ էք ասում, տէր հայր. ձեզ հօյատնի է, որ մեր կորսերը չեն սովոր վաղ պսակուիլ:

— Այ քեզ սիրուն պատճառ: Ուրեմն ձեր կարծիքով միայն սովորութիւնները պիտի անշարժ մնան, մինչ ուր էլ նայենք, ամեն բան անդադար փոխվում ու շրջվում է: Այժմ մարդիկ աւելի արագ են ապրում և ծառերն անդամ, որ դեռ նոր են պտուղ տուել, արդէն նորից ծաղկում են: Սա ձեր միակ որդին է.

ուրեմն ձեր յատուկ շահն իսկ պահանջում է, որ ձեր հոչակաւոր տոհմի յաջորդութիւնն ըստ կարելոյն շուտ ապահովուի: Այն էլ ի միտ առեք, որ գուցէ այս օր իսկ պատերազմ կը ծագի: Արքան պատահարներ, որքան փորձանքներ յառաջ կը գան: Լաւ չէ, որ բանն իսկոյն կատարուի: Եթէ ժամանակը հասել է, էլ սպասելն աւելորդ է: Տուէք ձեր որդուն մի լաւ կին, և շուտով տուէք: Դուք էլ կորս էք ինձ նման և զիտէք մեր առաջը, թէ «Լաւ է շատ զաւակ ունենալ տանը, քան թէ շատ հաց շտեմարանում»:

— Տէրտէը ջան, ձեզ ականջ դնելիս մարդ կարծում է, թէ խօսողն նոյն իսկ Յովհաննէս ու կերերանն է: Արեւո վկայ, ես կը պսակեմ իմ ֆիւմաթէին. բայց այս բանի վրայ մինչև հիմայ չէի մտածել և զիտեմ, թէ ում զիմեմ:

— Այ օրհնուած, զգիտես թէ ում դիմես, մինչ աղջիկը հէնց քո կշտին է նստած, և ինչպիսի ընտիր աղջիկ, ի՞նչ պատուական մօր զաւակ. ծնողները հարուստ, տունը շէն, յարդ ու պատիւն էլ մեծ:

— Եւ ով է այդ մարդարիտը:

— Ա՞վ, եթէ ոչ Կատալինան:

— Օրսանտօի աղջիկը՝ բացագանչեց կասկածամիտ ֆրանչէն, սչքերը քահանային

սևեռելով՝ նրա գաղտնի մտքերը թափանցելու համար, և ապա թէ ասաց. — Ձեզ ինձ մօտ առաքողը Օրսանտօն ինքն է, չէ. պարզ ասայէք, տէր հայր:

Տէրտէրն ինքն իրեն յանկարծ բռնուած տեսնելով, չգիտէր—ինչպէս դուրս գար պաշարումից: Եթէ խոստովանէր, որ առաջարկութիւնը միայն իւր հաճովքով էր արած, վախենում էր թէ բարեգուշակ նշաններով սկսուած դորձը իսկոյն ի չիք կըդառնար. միւս կողմից էլ գարշում էր սուտ ասելուց: Ուստի նա միշն ճանապարհն ընտրեց. այսինքն խօսելու տեղ՝ բեւանը փակեց, բազուկները բաց արսու և զլուկը դէպի աջ խոնարհեց:

Բախտն էլ ասես թէ նրան անճար թողնել չուզելով, իսկոյն խօսել տուաւ Փրանչին.

— Զգուշամիտ մարդ լինելու իմանալով, ետ կարծում եմ, տէր հայր, որ այսպիսի քաղլ չէիք անիլ, եթէ Օրսանտօի հաճութեան մասին վրաւ տահ չլինէիք:

— Այդ մասին միամիտ եղէք, ընդհատեց տէր Սետէմբրէն զարմանալի արագութեամբ, կարծելով թէ այստեղ մի փոքրիկ դուռն է բացփում վարանումից դուրս գալու համար. պատճառ նրա յայտնածը իրողութիւն չէր, այլ միայն մի կարծիք, որ արդարեւ ունէր: Սա-

կայն այս սփոփանքը կարճատեւ եղաւ, որովհետեւ Փրանչին խսկոյն շարունակեց.

— Էստ որում դուք գալիս էք Օրսանտօի կողմից, ուրեմն կարող էք ասել նրան, թէ ինչ որ նրան ցանկալի է, ինձ էլ է ցանկալի:

Մեր տէրտէրն այժմ ջրից դուրս գալով կրակն ընկաւ. վասն զի տեսնում էր, որ եթէ լուռ կենար, լուռթիւնը խարէութեան հաւասար կըգար,— և որպէս քահանայ, լաւ գիտէր, որ այս մեղքի համար քիչից եօթն տարի քաւարանում պիտի տապկուէր: Վակայն ճշմարտութեան սէրը մեզ վրայ հարկ է դնում ասելու, որ այդ չէր Սետէմբրէ հօր տատամսութեան պատճառը, որովհետեւ նախ—չէ թէ միշն եօթը, այլ տասնչորս տարի էլ նա յանձն կ'առնէլ տապկուիլ, միայն թէ իւր սրտի փափակը կատարուէր. երկրորդ—գիտէր, որ նեղ դրութիւնից դուրս գալու համար ատուած սուտերն այն ներելի մեղքերից են, որոնք օրհնած ջրով լուացուելուց ու զղութեամբ ողողուելուց յետոյ, կարող են խսպառ մաքրուիլ ապաշխարութեան աւազանում, առանց ո՛ր և է բիծ թողնելու: Նրան ճնշողը յատկապէս այս խընդիրն էր, թէ ինչ չարիք յառաջ կըգար, եթէ իւր ձեռնարկած բանն ուզած վախճանին չհասնէր: Եւ որովհետեւ նրա հոգու մէջ երկիւղն ու

յոյսն այսպէս իրար հետ մաքառում էին, ուստի նա դլուխը մէքիչ դէպի աջ թեքեց և ձեռքերը խաչաձեւ կուրծքին դրաւ, միշտ Յիսուսի այն պատկերի նման, որ նկարուած է Ավորնօի գրամատան մուտքի վրայ:

— Յտեսութիւն, մինչև վաղը, կամ վաղը չէ միւս օր, ասաց նա, հրաժեշտ տալով, գոնէ փոքր ինչ ժամանակ շահելու համար: Սակայն Փրանչին պատասխանեց.

— Ինչպէս գիտէք, այնպէս արէք, տէր հայր. միայն լիշեցէք ձեր խօսքերը, թէ երբ որ ժամանակը հասել է, էլ պէտք չէ սպասել. ըստ որում մէկ այսօրը երկու վաղից լաւ է, և երկաժր պէտք է կոփել, քանի որ տաք է:

Տէր հայրը, իւր զէնքովը խոցոտուած՝ զրեթէ չորս ոտքի վրայ սանդուղքներից վայր վագեց և արդէն դուրսն էր, յառաջ քան թէ Փրանչին իւր ասելիքի գէթ կէսն աւարտեց, ուրեմն և կարող էր ձևանալ, իրը թէ ոչինչ չէ լսել և պատասխանելու էլ հարկ չունի:

Վախենալով որ նրան յետ կըկանչեն, նա սկզբում վազելով էր վախչում: Բայց յետով, երբ արդէն բաւական հեռացել էր տանից, տըրտում տըրտում կանգ առաւ և ապա թէ հանդարտ շարունակեց ճանապարհը, այսպէս խօսելով ինքն իւր հետ.— Սիրելիդ իմ Սետէմբրէ, մի մի ժա-

մանակ գու ինքդ քեզ խելքով այնքան հարուստ ես կարծում, իբր թէ կարող ես միւսներին էլ մի մասը տալ. սակայն տես, որ ինքդ էլ պէտքից աւելի ես մոլորվում: Եւ ինչու. որովհետեւ հաւատդ քիչ է: Թէ ուրեմն ամրացիր այս համոզմամբ, թէ մարդս մի գովանի գործ անելիս միշտ Աստծու օդնութեան պիտի յուսայ: Բայց և այնպէս մարդկօրէն մտածելով կարելի է ասել, թէ զործիդ դառնադոյն մասն արդէն աւարտած է: Այսպիսի տիպուածներում ամենադժուար բանը փեսայ ճարելն է. իսկ հարախն գալով, բոլոր հայրերն էլ միաբան են, որ աղջիկները հազար տարի տանը նստելով աւելի գեղեցիկ չեն դառնալ: Ուրեմն համարձակ յառաջ գնա: Օրսանտօն քեզ բաց զրկով կ'ընդունէ, նոյնպէս և նրա պարկեշտ Անջիոլամարիս կինը, իսկ Կատալինա դստրիկը բոլորովին վզովդ կըփառէի: Ազգականներն ու ընկերները, աղախիններն ու սպասաւորները կ'ուղենան համբուրել քեզ: Կամաց որդեակներ, կամաց. մէկդ միւսի ետևից. ձեռքով շատ մի սեղմէք ինձ: Փիէ. տօ կարգս վկայ, դուք ինձ կըխեղդէք...— Եւ տէր Սետէմբրէն սրտի լիխապատար հրճուանքից այնպէս արագ յառաջ ճեպեց, ասես թէ մի ծիծեւնակ լինէր, որ սահում է գետնի վրայով մժղուկների ետևից: Այն, պատմում են մինչեւ

անգամ, թէ նա այն օրն մի այնպիսի բան առաւ, որի նմանը իւր կեանքումը չէր արած, ոչ առաջ, ոչ էլ լետոյ, — այսինքն իւր նուրբ ձայնով այս անուանի սերէն ադն երգեց.

«Կ'երթամ իսկոյն իշխանի մօտ,
Կ'ասեմ նրան, որ դու գող ես»...

և այսպէս բոլոր երգը:

Օրսանտօ Ալեսսանդրին մի զիտուն ու բարեկիրթ մարդ էր, որովհետև Պիզայումն էր ուսում առած և իրաւաբանութեան դօկտօրի աստիճան ունէր, որ այժմ միայն վէճերն արգելելու կամ թէ եղածներն երկուստեք հաշտութեամբ կնքելու համար էր գործ դնում: Այս վէճերը քննելիս նա երկու կողմն էլ, այսինքն՝ տանողին էլ, տարուողին էլ պատժում էր մի տուգանք վճարելու աղքատներին. իսկ եթէ ատենական քննութիւնը բարեկենդանին պատահէր, ստիպում էր որ դատամուտ մարդեկը դինով, ձկնով և ուրիշ լաւ ուտելիքներով տուժեն իշրենց վճարելիքը. այնուհետև իւր կողմից էլ աւելցնում էր առատ պաշար, և այսպէս իւրաքանչիւր տարի պատրաստում էր մի մեծ խընճուք, ուր գըեթէ բոլոր քաղաքը հրավիրուած էր լինում: Բարութեամբ ու քաջութեամբ նա Փրանչէին հաւասար էր. իսկ առատաձեռնութեամբ՝ նրանից էլ գերազանց: Ահա այս մար-

դու մօտ գնաց Սետեմբրէ քահանան, և հէնց որ տեսաւ նրան իւր պարտէզի թղենու ոստերը կտրելիս՝ զուարթ ձայնով կանչեց նրան.

— Օրսանտօ. այ, Օրսանտօ. լսեցէք, թէ ինչ աւետիք եմ բերում ձեզ:

— Աստուած բարին կատարէ: Դէհ ասացէք, ինչ կայ:

— Բայց նախ իշէք այդ ծառից. ասելիքս այնպիսի բան չէ, որ թղենու գագաթից լսուէր:

— Ոչինչ, տէր հայր. միայն թէ ասացէք, ինչ կայ:

— Ի՞նչպէս թէ ոչինչ. ուզում էք որ հէնց իսկո՞յն ասեմ՝ առանց որ և է յառաջաբանի:

— Էլ մի տանջէք, տէր հայր.

— Իմացէք ուրեմն, որ ես մի գեղեցիկ փեսայ եմ բերում ձեզ համար, — ոչ թէ ձեզ, այլ ձեր կատալինա դստրիկի համար:

— Իրա՞ւ:

— Տէր ողորմեա: Սուտ ասելս երբ էք լսել, որ այժմ ինձ չէք հաւատում:

— Բայց ով է այդ փեսան:

— Ջիամաթէօն:

— Փրանչէի որդին:

— Միթէ ոսկու գանձ չէ այդ գեղեցիկ պատանին:

— Զէ, չեմ ասում, սակայն արդեօք Փրան-

չէի կամքով էք գալիս Կատալինալին հարսնածելու:

Մեր տէրտէրը, որ երկու ժամուայ ընթացքում աւելի էր մարզուել դիւանաղիտութեան արուեստի մէջ, քան եթէ տասն տարի դեսպանութիւն արած լինէր պապի մօտ, իսկոյն մի ճարտար պատասխան գտաւ.

Ասացէք, ի սէր Սատծու, ինչ էք տեսնում իմ վրայ, որ խարէական լինէր.—արդեօք կերպարանքս: Կամ թերևս կարծում էք, որ ես Փրանչէի հաւանութիւնը զրպանիս մէջ չըդրած այսպիսի բան կ'ասէի՞ ձեզ: Տէր ողոմեա, կամ թէ իմ քահանայական կարդը էլ բանի տեղ չէք դնում:

Այդպիսի պատասխան տուաւ փոքրիկ քահանան իւր լսած հարցմունքին, բայց դարձեալ դա պատասխան չէր. սակայն խօսքի շրջանն այնպէս օգնեց նրան նպատակին հասնելու, որ միամիտ Օրսանտօն լիովին գոհ մնաց:

— Ինձ գալով, ասաց նա,— ինչու սուտ ասեմ— ես այդ բանին բոլոր սրտով յօժար եմ և հազար անդամ շնորհակալ թէ Փրանչէից և թէ ձեզնից: Սակայն դուք ինքններդ ասացիք, որ փեսալին ոչ թէ ինձ, այլ Կատալինալի համար էք բերում. ուրեմն պէտք է նախ նրա կամքն իմանաք, որովհետև երբէք չէ կա-

ըելի ստիպել նրան իւր չուզած բանն անելու:

Այս խօսքերից մեր տէրտէրը սաստիկ շփոթուեցաւ. հանեց իւր քուսիթան և հինգ վեց անգամ ճակատը տրոբելուց յետոյ գոչեց.

— Այդ ինչ ձեւեր են. բաւական է որ— մենք յօժար լինինք. միւսները պէտք է հնագանդուին:

— Ոչ, տէր հայր, նախ և առաջ պէտք է որ հարսն ու փեսան յօժարին, ապա թէ ծնօղները. որովհետև մինչև մահ կապուողները նրանք են, և ոչ թէ մենք:

Ահա այդ միջոցին էր որ հայր Սետեմբրէն, անակընկալ խոչընդոտի հանդիպելով, ասաց այն հոչակալաւոր ճառը «Յաղագս» ամուսնութեան և ծնօղական իրաւանց», որի նմանը դեռ երբէք չէր լսուած կորսիկայում: Այդ երեւելի ճառը դեռ երկար ժամանակ աւանդութեամբ կենդանի էր մնացել կորսերի լիշողութեան մէջ. բայց այսօր, երբ մեր պապերի բոլոր գեղեցիկ նշանակըները կորչում են, նա յաւտնի է միայն սակաւներին, և դուք, պարոն, օտարական լինելով, մեղնից էլ պակաս կարող էք հետաքըրքը ունենալ նրա մասին, ուստի զանց եմ առնում մէջ բերելու նրան այս տեղ: Հերլիք է ասել, որ քահանայի քարոզից յետոյ Օրսանտօն բոլորովին զմայլած բացազանչեց.

— Տէրտէր ջան, ձեր փաստաբանութիւնից քարերն անդամ իրենց տեղից կըշարժուին:

— Փարերն իրենց տեղը կենան, ասաց տէր հայրը. ես կըցանկայի միայն ձեր սիրտը դէպի յօժարութիւն շարժել:

— Իմ մասին կարճ կ'ասեմ, որ Եթէ ջուր էլ վազեցնէիք ապառաժից, այնու ամենայնիւ չէի ցանկանալ հակառակել աղջկանս կամքին:

— Վայ ինձ, հառաչեց քահանան և անմռունչ ընկաւ նստարանի վրայ. և մինչ նա աչքերը փակ նստած էր, նրա երեակայութեան մէջ վերատին սկսան ոստոստել այն ամեն ուրուական ողիները, որ նա ընդ միշտ հալածուած էր համարում:

Օրսանտօն զարհուրելով նկատեց նրա յուսահատ շարժմունքն և թէպէտ վերահասու չեղաւ պատճառին, սակայն և այնպէս վազեց դէպի նա և ասաց սփոփելով.

— Տէր հայր, ի՞նչ էլ պատահի, զործը զրեթէ վերջացած է երեւում. որովհետեւ, ինչքան որ ինձ յախտնի է, աղջիկս ուրիշ մարդու հետ յարաբերութիւն չունի և ուրեմն ձեր և իմ կամքին յօժարութեամբ կըհետեւի:

— Մէթէ, դոչեց քահանան աչքը բանալով և զսպանակի նման դէպի վեր թռչելով, դուք ինձ նորից սիրտ էք տալիս: Եկէք գնանք

և իսկոյն հարցնենք Կատալինալին: Զէ, սպասենք. ես ինքս կ'երթամ նրան կանչելու:

— Վստահ եղիք, ասաց Օրսանտօն, իջնելով ծառից: Բայց տէր հայրն արդէն արագ վազելով հասել էր տան սանդուղքին և միանգամից չորս չորս աստիճան կոխելով այնպէս էր գոռում, որ գերաններն անդամ յօդակոտոր դղբրդվում էին:

— Կատալինա, այ Կատալինա. ուր ես կորել:

Սակայն աղջիկը չէր պատասխանում, և այս չարագուշակ լուսութիւնն արդէն նորից աղմկելու վրայ էր բարեսիրտ քահանայի հոգու մէջ դեռ նոր նիրհած դեերին, երբ Օրսանտօն նրա ետեւից հասնելով ասաց:

— Տէրտէր ջան, եթէ չիմանալի, որ գուք ՚ի պաշտօնէ դեեր հալածող էք, կ'ասէի որ ինքններդ էլ այսօր այսահար էք եղել: Միթէ կարծում էք, թէ մի պարկեշտ օրիորդ իսկոյն պատասխան կըտայ հէնց առաջին հարցնողին: Դէհ գնացէք: Բայց դուք լաւ կըկրթէիք ձեր աղջկան, եթէ աղջիկ ունենալիք: Թողէք որ ալժմ ես ինքս շարունակեմ գործը:

Օրսանտօնի խօսքերն ընդհանրապէս ճշմարիտ էին, բայց ի մասնաւորի—եթէ նա պատի միջով ներս նայելու կարողութիւն ունենար,

կըտեսնէր որ շատ էր սխալվում: Որովհետև կատալինան իւր անունը լսեց թէ չէ, իսկոյն վեր թռաւ աթռուից և ուզում էր վաղել, և ով դիտէ թէ ո՞րքան հեռու կըվագէր, եթէ մայրը նրան ըլբռնէր ասելով. Կոտիր, կատալինա, կանչողը հայրդ չէ: Բայց երբ որ իսկոյն հօր ձայնը լսելի եղաւ, մայրը հրամայեց. Հայրդ է կանչում, դնա, զաւակս:

Սղջիկը նետի պէս դուրս թռաւ և աստիճաննէրից շուտ շուտ վայր ցածրկելիս այնպէս բախուեցաւ տէրտէրին, որ սա անջուշտ կըզլորուէր, եթէ իսկոյն երկու ձեռքով բաղրեքց ըլբռնէր: Օրիսրդից ներողութիւն իսնդրելուց և ստանալուց յետով, Օրսանտօն վեր քաշեց նրա գլուխն և շեշտակի աչքին նայելով ասաց.

— Կատալինա, լսիլ թէ ինչ կայ: Մեր տէր հայրը գալիս է Փրանչէի կողմից քեզ հարս իսնդրելու: Արդնօք կ'ուզէիր Քիամաթէօին գնալ:

— Այն պարկեշտ երիտասարդին, որ պատարագի ժամանակ միշտ քո դէմ է կանդնում, սւելացրեց տէր հայրը: Սակայն նրա ձայնն իզուր հնչեց. որովհետև աղջիկը ասես թէ ատրճանակից իւր ականջին դիպած հարցմունքը լսեց թէ չէ՝ բոլորովին շփոթուեցաւ ու փա-

խաւ աւելի շուտ, քան որ եկել էր: Հայրն աջձեռը դէպի վեր ուղղած՝ շանթահարի նման կանդնած մնաց. իսկ քահանան երեսի քրտին-քը արբեկով սկսաւ նզովել այն ըոպէն, երբ առաջին անգամ միտք էր յղայել այս փշոտ գործի մէջ մտնելու, — այն ինչ կատալինան կեռասի պէս կարմրած վազեց մօր մօտ և իւր դէմքը նրա զրկի մէջ թաքցրեց: Անջիօլամարիան, որ արտաքին կոշտ կեղեւ տակ մի զգայուն սիրտ ունէր, քնքուշ ձախով հարցրեց աղջկան, թէ ինչու է այնպէս յուզուած, և բարի զաւակը փոքր առ փոքր, կմկմալով ու թոլթովելով ամեն բան պատմեց նրան: Մայրը հանգստացրեց նրան և գնաց մարդու մօտ: Ոչ խստութեամբ, ոչ էլ կեղծեալ դէմքով, այլ ուշիմ տանտիկնոց վայել գգօնութեամբ նա յանդիմանեց մարդու անպատեհ վարմունքը զաւակի հետ: Օրսանտօն և տէր Սետէմբրէն գրեթէ միաբերան գոչեցին.

— Իրաւ ես ասում, Անջիօլամարիա, հազար անգամ իրաւ... քո մարդը... Սետէմբրէն... մենք երկուսս էլ լաւ էշեր ենք:

Տանտիկնն այս խոստովանանքից լիովին գոհ մնաց, ուստի և զիջանելով յօժարամիտ ուկնդրութիւն շնորհելու նրանց, թոյլ տուաւ որ պարզեն իրեն գործի էութիւնը: Իւր կա-

տարեալ համաձայնութիւնը յայտնելուց յետոյ՝
նա ժամանակ խնդրեց բանակցելու Կատալինալի
հետ և գնաց պատասխան բերելու:

— Գնացէք, Անջիօլամարիա, և Աստուած
ձեզ օդնական, ասաց քահանան. ես միշտ կրկը-
նել եմ, որ դուք լիովին տուրը կին էք:

Քահանակի համբերութիւնը դարձեալ բա-
ւական ժամանակ փորձի տակ ընկաւ, մինչև
որ նորից քայլեր լսուեցան և մայրը յետ եկաւ
աղջկալ հետ, որ աչքը պարկեշտութեամբ խո-
նարհած՝ մեղմիկ ձայնով ասաց Օրսանտօին.

— Սիրելի հայրիկ, քո դուստրը չգիտէր և
չգիտէ մի աւելի մեծ ուրախութիւն, քան թէ
կատարել այն, ինչ որ գու ես կամենում և
խնդրում:

Օրսանտօն իւր աչքի մէջ արտասուք զզա-
լով փռշտողի պէս շուռ եկաւ կաթիւները սըր-
բելու համար, պատճառ մեր երկրի սովորու-
թիւնը չէ ներում, որ կորսիկացի աղջիկը տես-
նէ իւր կորսիկացի հօր լաց լինելը: Իսկ տէր
Սետէմբրէն, իրեն եկեղեցում կարծելով, սկսաւ
երգել և ասել.

— Փառք ՚ի բարձունս Աստուծոյ, և յեր-
կիր խաղաղութիւն, ՚ի մարդիկ հաճութիւն:

Այսպէս միացան իրար հետ Քիամաթէօ
Օրթիկօնին և Կատալինա Ալէսսանդրին, որոնց

հետ ես էլ, քանի որ նրանք կենդանի էին,
մտերմութեան յօդերով կապուած էի և որոնց
քաղցր լիշտակը դեռ այսօր էլ անջինջ պա-
հել եմ իմ վշտահար սրտի մէջ:

Այդ հարսնախօսութեան լուրը մեծ ուրա-
խութիւն պատճառեց Կանարիի բնակիչներին.
Նրանց համար դա մի աւետարեր ընտանեկան
դիպուած էր. դրանով պիտի վերջ դրուէր եր-
կու զերդաստանի փոխադարձ թշնամութեան,
որ այնքան ժամանակ զժութիւն էր ձգած
քաղաքում, ատելութեան, վրէժինդրութեան և
ուրիշ շատ չարիքների աղբիւր դառնալով:

Թէպէտ ժամանակը ուրախութեան ժամա-
նակ չէր մեր հայրենեաց համար, բայց և
այնպէս եթէ քննենք, կրտեսնենք, որ մենք
քառասուն տարի տևող անըդ հատ վրդովմունքից
աւելի շահուած էինք, քան թե վնասուած,
ազատութեան կենսատու շնչի շնորհիւ, որ ա-
ւերակների միջից անդամ դիտէ օգուտ դուրս
բերել: Առետուրը ծաղկել էր, երկրագործու-
թիւնը բարդաւածել և ժողովրդի թիւը բազ-
մացել:

Մեզ նպաստաւոր էր և այն հանգաման-
քը, որ մենք 1764 թ. սկսած զինադուլ ու-
նէինք և որ ֆրանսիացիք այդ միջոցին մեր
շուկաներում ապրանք գնելով՝ բաւական փող

էին մտցրել ժողովրդի մէջ: Թրամի հետ նրանք ազահութեան, վատթար ծուլութեան, քրտնաշան վաստակի ատելութեան, ստրկութեան սերմեր էլ ցանեցին մեր մէջ. բայց այն ժամանակ մենք չէինք տեսնում այդ բաները: Մի մի ժամանակ մենք արդարև լիշում էինք, որ զինադուլը շուտով վերջանալու է. սակայն այդ միտքը նոյնքան էր մնում մեր զիշում, որքան որ յուլիսի ամպը մեր օրհնած երկնքի վրայ: Զուր յայտնի եղաւ մեզ Վերսայի դաշնագրութիւնը, որով Ֆրանսիան կամենում էր գնել մեզ հասարակապետութեան ձեռքից. զուր էին 22նջում մեր ականջին, թէ Տուլօնի հզօր նաւատորմը մեր տունը քանդելու համար տասնվեց զունդ պիտի թափէր մեր կղզու վրայ: Մենք հողմի տուինք այդ ազդարար ձայները, որովհետև բնաւ չէինք կարծում, թէ Ֆրանսիան, որ երբեմն մեր ազատութեան զօրավիգն պաշտպանն էր, այժմ դաւ կըդնէր նոյն ազատութիւնը մեր ձեռքից խլելու և մեր հայրենիքը կորստեան մատնելու համար, ինչպէս որ արել էր Լիւդովիկոս ֆԵ: Զէինք հաւատում, որ ամենաքրիստոնեայ թագաւորն ընդունակ լինէր արծաթով գնել մի սպիտակամորթ և ընդ նմին քրիստոնեայ ազգ, — մինչ ֆրանսիան փիլիսոփաներն այնպէս ուժովին մաքա-

ռում էին մի քանի ու խափշիկների վաճառման դէմ, որոնք հօ աւելի կապկի են նման, քան մարդու: — Միթէ չի ամաչի, ասում էինք մենք, մի մեծ լիմարութիւն ասելով, — քսանվեց միլիօն հպատակ ունեցող մի զօրեղ պետութիւն յարձակուել թշուառ Կօրսիկայի վրայ, որ հաղիւ թէ երկու հարիւր հազար բնակիչ ունի: Մենք ապաւինել էինք Պաօլի զօրավարի սթափութեան ու բարի բախտին, և որովհետև մարդիկ միշտ հակամէտ են իրենց կամեցին հաւատալու, — ուստի մենք էլ յուտով էինք, որ եթէ իրերի արդի վիճակը ըրլաւանար էլ, զոնէ աւելի չէր վատանալ:

Այս պատճառով կանարացիք միաբան որոշեցին՝ Զիամաթէօի և Կատալինալի ցանկալի հարսանիքը ոչ թէ սովորական, այլ արտաքոյ կարգի շքով տօնել: Այս օրուան օրս հին Կորսիկայի հագուստների հետ՝ մեր հին սովորոյթներն էլ ընդ միշտ կորել են: Ինչպէս որ եկեղեցին, եթէ քահանան յանցաւոր զտնուի, նրանից կարզը խլում է և նրան մի առ մի մերկացնում նուիրական զգեստներից, որոնցով մատչում էր սուրբ սեղանին, — այնպէս էլ ֆրանսիան զրկում է մեզ մեր վաղեմի կարգերից և մերկ է թողնում, կամ — լաւ ասել՝ տալիս է մեզ ֆրիստոսի ծիրանի պատմուճանը, եղեգնեալ

զալիսոնը և փշեայ պսակը; Ո՞հ իմ սիրուն
Կորսիկայի Աստծու օրհնած հին բարք ու վարք.
արդեօք մւր գնացիք, անհետացաք: — Եւ ծե-
րունին երեսը ծածկեց, և սրտասուքն արդեկեց
նրան յառաջ տանել իւր խօսքը:

Միայն թէ երկար աղաչելուց յետոյ նա
սիրտ առաւ նկարագրելու վաղնջուց սովորու-
թիւնները, որոնց չքանալն այնքան վիշտ էր
ազդում նրա սրտին: — Պսակի օրը, ասաց նա,
տան ստորին յարկում Կատալինան իւր ընկե-
րուհիներով և ազգականներով շրջապատած,
սպասում էր վիսայի գալուն:

Փեսան եկաւ ձի նստած, հետն էլ մի քանի
սպառազէն ընկերներ: Այս սովորութիւնը, լսա-
ծիս նայելով, ծագում էր դեռ յոյներից և յատ-
կապէս Սպարտացից, ուր ամեն մի կտրիճ պար-
տաւոր էր առևանգել իւր հարսին: Այս կեր-
պով տղամարդու իշխանութեան ներքեւ ընկած
աղջիկը յանձնալում էր մի կնոջ, որ հարսանի-
քի դիմաւոր տնօրէնն էր. այնուհետեւ, գիշերը
վրայ հասնելուն պէս՝ նրա մագերը կտրում էին
և նրան թիկնոցով պատած նստեցնում էին մի
յարդադէզի վրայ, ուր վիսան դալիս էր որո-
նելու նրան մթնում և գրկելով առնում տա-
նում էր դէպի տուն:

Հարսին մալբենի տնից հեռացնելիս հաց ու

պտուղ էին տեղում նորատի զոյգի վրայ, և
հանդիսական ժողովուրդը սկսում էր իրար
անցնել այդ ձիրքը մինը միւսից շորթելու հա-
մար, և այս արարողութիւնը, որ ժառանգուած
էր լատիններից, շնորհ էր կոչվում: Սա-
կայն այդ տարօրինակ տեղատարափը միայն
դրանով չէր վերջանաւ. որովհետեւ ամբողջ ճա-
նապարհին պատուհաններից ու պատշգամբնե-
րից ցորեն, գարի, կաղին, չամիչ և նուշ էր թափ-
վում վիսայի ու հարսի վրայ և վերևից հըն-
չում էին — Աստուած ձեզ բախտ ու շատ որ-
դէք պարզեց:

Ճանապարհի ծալըն տօնական շորեր հա-
գած պատանիները թէւ թէկի տալով տրաւա-
տա, ալսինքն պատ էին կապում, և չէին
թողնում անցնելու, մինչև որ նորապսակները
որ և է փրկանք չըվճարէին, որ և վիսան պի-
տի վճարէ: Գրամային պարգևն ընդունելուց
յետոյ պատանիները կեցցէներ էին հնեցնում
և ապա թէ գնում հարսն ու վիսայի կենացը
խմելու: Այս սովորութիւնը, ծերերի ասելով,
մնացել էր միջին դարերից, երբ աւատական
իշխաններն աւատառու գեղջուկներին ամուս-
նութեան իրաւունք տալու համար մի որոշեալ
հարկ էին վերցնում նրանցից:

Պսակուողները նստում էին եկեղեցում զար-

դարուն աթոռների վրայ, և ամբողջ պատարագի ժամանակ հարսը բռնում էր գրկում մի փոքրիկ տղայ փեսալի ազգականներից, համբուրում էր նրան և վերջապէս զգուելով դնում նրա գլխին մի կարմիր գդակ, որ իւր ապառնի մայրական խնդութիւնների նշանակն էր: Պատակի հանդէսից յետոյ ազգականների ու մերձաւոր բարեկամների սիրալիր ողջագուրանքն ու փարմունքը վերջ չէր գտնում, և այդ միջոցին ամեն մարդ բարիք էր մաղթում պատկուածներին, ասելով, Աստուած ձեղ բախտ շնորհէ—երեք մանչիկ ու մի աղջիկ:

Հէնց որ նրանք եկեղեցուց դուրս էին գալիս, մօտենում էին երկու ձիաւոր և մինը տալիս էր հարսին՝ ծալը ժապաւէններով, թելերով ու սպիտակ դրօշակով պաճուճած մի իլիկ, որ ջանասիրութեան նշանակ էր. միւս ձիաւորը շնորհում էր փեսալին նոյնպէս զոյնզգոյն ժապաւէններով ու ծաղիկներով զարդարուած մի ոստ, և այս ընծալաբեր ձիաւորը կոչվում էր ծաղկապետ:

Տուն գնալուց յետոյ ամուսիններն ընդունում էին զանազան ընծաներ, որոնց մէջ այնքան շքեղութիւն չէր երեսում, որքան որ բարի կամք և տնալին աշխատասիրութիւն. օրինակի համար—տանը մանուած կտաւ, տանը

կարուած հայուսու և ապն: Կատալինային պի-նակուած սպարզեների մէջ նշանաւոր էր մա-նաւանդ մի գոմբիս յի թեկուհիւս կոճակիներով: Ինչուքը թէ եւ կերպելուների տեսակով հարսուս չէր, բայց առատ էր, և ամեն մարդ կարող էր զալ ու կշտանալ: Սեղանից յիտոյ աշուղը սկսաւ. հարսանեաց երդեր երդել զիթա-ռի վրայ—մի զորձի, որ թողել էին մարդուա-նացիք մեր կղզուց մեկնելիս,—և որովհետե-ամենքի կարծիքով շատ յաւ էր երդում, ըն-չաւէտ հարսը չորս թաշկինակ շնորհեց նրան ։ Երկուուր կարմիր, երկուուր կապոյտ: Անուհետե-սկսան պարել տրիչիօնէն, որ ծանր ու չա-փաւոր քայլով է պարփռում. գրան յաջորդեց սերկան, որ միայն երկու երեք անձինք են պարում, մինչեւ որ պարողների թիւը շատա-նալով կալթիւնն ու գորիւնը զաւնում է չտ-փից զուրս հրճուալի, մենցական ու զուարթ: Աերջատպէս յառաջ եկուն ամենից լաւ կաքաւող և մինչեւ այժմ զիտութեամբ հեռու կանդնած աղջիկներն ու տղամարդիկը և պարեցին ուղա-դան և լադրօն: Այդ միջոցին հասարակ ժողովուրդն էլ, որ կամենաւմ էր մատնակցել ուրախ տօնին, խոնլում էր տան առջեւի մարզի վրայ և թռչնոտում սիրած պարերը, որոնք էին տարանտէլլան և կարա սցէնան:

— Բայց այս բոլորը, շարունակեց ծերունին, միայն ընտանեկան հանդէսներ էին: Հարասնեաց տօնին աւելի վայր տողու համար ժողովորդը կատմեցու յայտնել իւր խնդր թիւնը նոնե մի ճրագալոյց անելով, խարոյի վառելով ու հրայաններ պարզեցով, որ սաստիկ զարդարվածառեց տէր Յիտէմբը: քահանացին, այսպէս որ նա, առանց մտածելու որ մի զնդակ կըզիազէր իրեն, ընկու թժանդ ձլողների մէջ տեղն և դիւահարի նման զուաց:

— Խնայեցի՞ք վասոզը, որովհետեւ նա կարող է հէնց վազը ովէտք դալ ձեղ:

Բայց և այնպէս այնքան զուարձութիւնները հերիք չեղան ժաղովրդին, և աւազները միասին զումարուելով խորհարդ տիսան, թէ արգեօք լաւ չէր լինի՝ հռչակառը հարստնիքըն բատ արժանացն տօնելու համար մի մի ստէր ներկայացնել: հին կորսիկեան սովորութեամբ, ու այս խնդրի վրայ ձայնարկելիս բալորն էլ միարեւան յօժարութիւն յայտնեցին:

Այս միստէրները թէ իտալիայում և թէ ուրիշ երկերներում դրամատիքական ներկայացրումներ էին, որոնց նիւթը առնվազն էր ո. Կատարինէ կուսի կեանքից, կամ թէ ո. Գետառսի մարտիրոսութեան անցքերից և կամ աւելի ստէա՛քրկը կրած չարչարանքի պատմութիւնից:

Դանք այժմ մերինին: Մեր քաղաքից զորս մի բույր կայ, որի վրայ գեռ այս օր էլ բուսնում են ձիթենիներ, ու շաճեր, իսկ այն ժամանակ նա ևս աւելի անտառու էր: Արդ մեր քաղքցիքն այդ ծառերից մի քանիսը կտրելով՝ բուները պինդ մեխեցին հաւառար թողուած կոճղների վրայ ու բեմ շինեցին: յետոյ բեմի շուրջը կանգնած ծառերը շոճի ու սարդենու սատերով հիւսեցին և այսպէս մի թաւ պարիսապ գոյացաւ. վերջապէս ծառերի գագաթները դէպի վայր քաշելով իրար կապեցին, և այս կերպ պով բեմի վրայ մի գմբեթ յօրինուեցաւ, որ շատ սիլուն տեսք ունէր: Բեմի առջև տնկեցին մրտենի, խնկենի, անանուխ, նարդոս, մուշկ և ուրիշ հստաւէտ տունկեր, որպէս զի հանգիսականների քիթն էլ առանց զուարձութեան ըլմնար: Աչ մի ճարտարապետ չէր կարող պատրաստել մի աւելի գեղեցիկ բեմ, քան այս բեմը, որ ասես թէ նոյն իսկ բնութեան ձեռքով շինուած լինէր:

Բայց էլի մէկ դժուարութիւն կար յաղթելու — հազուստներ չկային. սակայն այս բանին էլ գարման զտան, որովհետեւ ամեն մարդ տուաւ, ինչ որ ունէր:

Պիղասոսի համար ճարեցին մի զոյդ ասպետական կօշիկներ, որոնք թէև մաշուած էին,

բայց դեռ հազնել կարելի էր: Ֆրանչէն շնորհեց իւր հին համազգեստը, որ մնացել էր իւր պապից. այս համազգեստին աւելի շքեղութիւն տալու համար վրան կարուեցան երկու նոր ուսաղիրներ—մինը սակուց, միւսն արծաթից: Իբրև զլխի զարդ Պիղատոսին տուին գունաւոր շալից շինած մի ապարօշ. վարտիկի տեղ՝ հազցրին մի կնոջ շրջազգեստ՝ դիւրութեան համար մէքիչ ամփոփուած ներքենից,—և այսպէս Պիղատոսի բանը շուտ վերջացաւ:

Հայր Սետէմբրէն բնաւ չէր կամենում մի կնդուղ տալ Կայափային, և սա ուրախ էր որ վերջ ի վերջոյ զոնէ մի եռանկիւնի փեղոյլ գտաւ: Յակայն այս վեղոյը դեռ հերիք չէր Կայիսափային ճիշդ հրէից քահանայափետի կերպարանք տալու համար. ուստի նրան հազցրին մի երկայն զեղին վերարկու և մի մօրուք այծի մազերից: Մէկ էլ տեսնես՝ մի մարդ ասաց, որ ակնոց դնեն նրա քթին. մէկ ուրիշն էլ նկատեց, թէ հին գարերում ակնոց դնել սովոր չէին: Այս խնդրի վրայ սկսան վիճել և վիճողներն արդէն յուսահատուելու վրայ էին, երբ որ մի զեղագործ՝ մէջ մտնելով առաջարկեց, որ ամենքը միասին հայր Սետէմբրէի մօտ դնան և ակնոցի վոխարէն՝ մի ժամադիրք խնդրեն նրանից: Մեր կարճուկ տէրտէրը հէնց

որ լսեց, թէ այդ ամբարիշտ մարդիկը մտադիր են ժամազիրք դնել Կայափայի ձեռքի մէջ, գաւազանով զուրս վանտեց բոլորին: Բարեբախտաբար ճանապարհին նրանք հանդիպեցան նօտարին. սա տուաւ նրանց առաջին խոկ ձեռքն ընկած մատեանը, և որովհետեւ այդ մատեանը պատահմամբ Սուրբ Հռոմէական պետութեան դատական վճիռների հատորն էր, ուստի ամենքը գտան, որ նա ժամազրքից էլ աւելի յարմար կըգար Կայիափային:

Թագաւորական հանդերձ ըրդտան, չնայելով որ ամբողջ Կատոկորզօն տակն ու վրայ արին. վասնորոյ հերովդէսը ստիպուած եղաւ հերիքանալ շէկ բանինով ու խողեմորթ կօշիկներով: Եւ որովհետեւ նա առանց թագի չէր կարող զանազանուիլ վերջին ուամկից, — այս պատճառով վճռեցին ոսկէզօծ թղթից շինած թագտալ նրան:

Այսպէս դժուար բաները հոգալուց յետոյ Մարիամ կուսի համար զգեստ ճարելն արդէն հեշտ էր. նոյնը պէտք է ասել և Յիսուսի և առաքեալների հագուստի մասին, որոնք խոկոյն կարուեցան պաստառներից ու կտաւներից:

Բայց ուրիշ էր հրեշտակների բանը, պատճառ այն թոկերը, որոնցով նրանք թեատրաբած

ու հորիզոնական դիրք պիտի բռնէին բեմի վրայ, սահման էին նրանց թևերի տակ և նրանք յանկարծ կախ էին մասմ ուղղաձիգ։ Ամենալատը սակայն այս էր, որ նրանք նկարուած հրեշտակների պէս լուռ կենալու փոխարէն, թուկերի պատճառած ցաւին չղիմանալով, սկսում էին ցնցել իրենց ոտքերն և աղիողորմ լաց լինել։ Դիերն աւելի պարկեշտ էին։ Նրանք հանդիսաւ պազգած էին բեմի տակ, և երբ դուրս գալու նշան էր տրվում, խոկոն սանդուղքների վրայով վեր էին մագլում և փրովում բեմի բոլոր անկիւններն ու ծայրերը. ուստի պէտք է խօստովանել, որ հնագանդութեան ու համեստութեան դալով՝ դևերը հրեշտակներից խելօք էին։

Որովհետև խօսքս դեերի վրայ է, պիտի ասեմ, որ այս բանումն էլ մեծ դժուարութիւն ծագեցաւ ու շատ արիւն քրտինք թափուեցաւ. բայց և այսպէս ամեն բան անշուշտ հաշտ ու հանդարտ կրվերջանար, եթէ Յիսուսն և Յուդան արգելք զինէին։ Թրանք երկուսն էլ դաշթակութեան վէմեր էին, որոնց վրայ քիչ մնաց ամբողջ ներկայացումը խորտակուէր։ Բանն այս է, որ բոլորն էլ ուղում էին Յիսուսի գերը խաղալ, կմկ Յուդալինք – ոչ ոք։ Լաւերը կարծում էին, որ եթէ Յիսուսի գերը ներկայաց-

նէն, աւելի լաւ մարդ կ'երևնան. իսկ անշահները – վախենում էին, որ Յուդալի գերի մէջ բոլորովին գարշելի կրդառնան, – և այս հաշիւները մասսամբ իւիք հիմնաւոր էին։ Վերջ իվերջոյ որոշեցին Յուդալի գերն նրան յանձնել, ով որ ամենից կտրիմ ու բարեքարոյ էր քաղաքում, այսինքն Ջիամաթէօին – Կատալինայի նորատի մարդուն. իսկ Յիսուսինը տալ նրա կաթնեղօրը, որ խոկապէս կախուելու տրժանի տղայ էր։ Սակայն շատ էլ չվատարաննենք նրան. Փիդէլիօ Փարըլիցին ողբանց սիրում էր իւր հայրենիքը, հնազանդում էր ծնողներին և երկնչում Աստծուց։ Բայց եթէ մի յարդիկ էլ ընկնէր նրա ոտքի տակ, իսկոյն բերնից անէծք ու լիշոցք կըթափեցնէր, – ասես թէ բոլոր աշխարհը քանդուելու էր։ Պարդ կօրծանելը նրա համար մի հում ձու խպրշտելու պէս թեթև բան էր, թէև պէտք է ասել, որ մինչև այն ժամանակ նա դեռ ոչ ոքի արեք չէր մարել. միայն թէ մէկի և կամ միւսի աչքն էր հանել, ատամները փշոտել – նրա բաժնած անթիւ պալարների մասին էլ բան չասենք։

Խնդիրն այս էր, որ մարմնի կազմուածքով ոչ ոք այնպէս անյարմար չէր Յիսուսի գերին, ինչպէս որ այդ Փիդէլիօն։ Զեղ յայտնի

է, թէ որչափ տարբեր և կամ ներհակ ճաշակ ունին յոյներն ու լատինները Փրկչի պատկերը նկարելու մասին։ Լատինները կերպարանում են նրան երիտասարդութեան վերջին տարիներում, միջին հասակով, շատ սիրուն ու վայելուչ տեսքով, բարի դէմքով, նօսր մօրուքով և սովեգոյն թաւ հերքով։ Իսկ յոյները սիրում են զարհութելի ձևացնել նրան - զըժգոյն, նիշար, գուրս ցցուած կտղերով. այնպէս որ ես ստէպ լսել եմ Տօսկանայում այս խօսքը, թէ «Դու Յիմաբուի Քրիստոսից էլ զազրալի ես», — որովհետեւ Յիմաբու նկարիչը, ինչպէս ասում են, սովոր էր յոյների օրինակին հետևել։ Բայտ այսմ Ֆիդէլիօն ոչ լատինական տիպարին էր համապատասխան, ոչ էլ յունականին. նա բոլորովին մի ուրիշ տեսակ Քրիստոս էր՝ երեք ու կէս կանգուն բարձրութեամբ, այնպիսի ամուր լանջով ու ջլուտ բազուկներով, որ մենակ կարտղ էր մի նաւ թիմալարել, — երեսի մորթն արեի տապից կարմրած ու սեւացած էր խանձօղի նման, որ թէև շիջած, բայց դեռ ալրվում է։ Նրա զլուխը պատած էր մի թաւագէս անտառով, որի մէջ ամենապինդ երկաթի սանտրն անգամ, — եթէ յանդընէր կոկել նրան, — ապակու պէս կըփշուէր։ Այսուքի և ունքի մասին լաւ է լռեմ. իսկ

ձայնին զալով՝ կ առեմ միայն, որ եթէ ուրիշները հեռուից լսուելու համար պէտք համարէին զուսնա վիճել, նրան բաւական էր միայն մի մունչիւն արձակել։ Այսպէս էր կորսիկացի Քրիստոսը։

Տէր Աետէմբրէն մի տարօրինակ սէր ունէր Ֆիդէլիօլ համար. ոտկայն այս սէրը ոչ թէ արդելում, այլ ևս աւելի իրաւունք էր տալիս քահանակին հովելու այդ երիտասարդի վրայ և երբեմն, ուր էլ պատահէր, մի փաքրիկ քարող կարգալու զլիխն, որպէս զի նա չըշեղուէր վըրկութեան ճանապարհից։

Երաժշտութիւնը կազմուած էր մեզ մօտ կօլօմբի կողուած փաղելից, և ես կարող եմ հաւաստել, որ երբ այդ փողերից վաթսունը միասին փշել սկսան, հարիւր տարուայ մեռելներըն անգամ պտույտ եկան գելեղմանում, կարծելով թէ ահեղ դատաստանի օրն արդէն հասել է։ Ահա այսպէս սկիզբն առաւ ներկայացումը, և ի մեծ խնդութիւն ժողովրդի ամեն բան շատ յաջող դնաց մինչեւ այն բոպէն, ուր Յուդան փարիսեցիների ուղեկցութեամբ դալիս էր Գէթսէմանի պարտէզը՝ համբոյը տալու Յիսուսին։ Երբ Ֆիդէլիօն տեսաւ, որ Յուդան մօտեցնում է նրան իւր շրթունքը, իւր հաստթաթն նրա ուսերին դրաւ և իւր դերի բուն

խօսքերը մոռանալով, հարցրեց նրան ահեղաձայն.

— Ֆիօվա եղբայր, դու ուզում ես մատնել քո Փիդէլին, որ քեզ այնքան սիրում է:

— Ոչ քեզ կըմատնեմ, ոչ էլ ուրիշն, պատասխանեց պատուական երիտասարդն և հեկեկալով փարուեցաւ. նրա վզին:

Պարզ է որ այսպիսով ներկայացման կապը պիտի խզուէր և դործողութիւնը դադարէր: Սակայն բանը սրանից էլ վատ հետևանք ունեցաւ: Հարիկաւ մի մեծ վնաս չէր լինիլ, եթէ Քրիստոսը 1768 թ. սուտ խաչելութեան մատնուէր, որովհետև խոկականը ով թոյլ կըտար: Բայց ճակատագիրն ուզեց, որ բանը կըուի հասնի, և տեսէք, թէ ինչպէս:

Սուրբ Պետրոսի գերը խաղացող նուցիօ Սալվատօրին, Յիսուս Քիդէլիօի հարազատ աղդականը, տեսնելով որ Մաղքէսի պաշտօնը կատարող Ֆիօվանանտօ Մաթէին, — Յուղալի զղջալուն չնայելով, մտադիր էր Յուղալի վրայ յարձակուել, — այնպէս ուժգին հարուած շեշտեց նրա զլիխն, որ Մաղքէսոը թաւալ զլոր վայր ընկաւ, բայց և խոկոյն վեր թուչելով մի այնպիսի անուն տուաւ. Սիմօն Պետրոսին, որ ինձ կրկնել անհնարին է: Այնուհետև Փիդէլիօն, որ մի աղջկայ պատճառով վազուց ար-

դէն վլէժ ունէր Մաղքէսի դէմ, դարձաւ Սիմօն Պետրոսին և որոտաց.

— Անապական Կոյսն վկալ. դէ կէս արա այդ նղոված շան գլուխը:

Այս բանի վրայ Մաղքէսոը կատաղեց ու գազանաբար աղաղակեց.

— Երդվում եմ քեզ Փլկչովս, Փիդէ, մի կարծիր, որ ես քեզնից կըքաշուիմ Յիսուսի դերը խաղալուդ համար. դու այն ասա, ինչ որ գրուած է գերիդ մէջ, և ոչ մի խօսք աւելի — Հասկացմար:

— Իսկ եթէ ինչ որ ուզենամ՝ այն ասեմ:

— Այն ժամանակ, Քրիստոս ես թէ ոչ Քրիստոս, ես քեզ —

— Ի՞նձ:

— Այս, քեզ և ամենքին, որ քեզ ուաշտական են:

— Per Dio santo! Հապա տեսնենք ինչ պիտի անես, այ աւազակ:

Փիդէլիօն վաղեց հանեց տերեւապատ կոճղի տակից մի հրացան և ուզեց արձակել Մաղքէսիսի, կամ լսու ասել՝ Ֆիօվանսանտօ Մաթէի դէմ: Սակայն հենց այդ բոպէին, յանկարծ Սետէմբրէ քահանան վրայ հասաւ, բըռնց նրան, շորթեց ձեռից հրադէնն և ապա թէ աքացի տալով քշեց նրան դէպի այն տու-

նը, որ գուք տեսել էիք այսօր։ Բայց չկարծէք, որ Փիդէլիօն իւր հոգևոր հօրից պատկառելով թոյլ տուած լինէր իւր հետ այդպիս վարուելու։ Արդարեւ նու պաակառում էր տէրտէրից, սստիկ էլ ամաչում էր ներկայացման այդ խայտառակ վերջաբանից. բայց և այնպէս ընդ միշտ սրոշուած ինդիր է այս, որ ոչ ոք չէր կարող ընդդիմանալ Սետէմբերէ քահանայի շանթաձիդ աչքին, նրա շըթունքից գուրս թըռոչող բարկութեան շնչին, նրա կոռուփների հարուածին։ Այսպէս նա տարաւ ձգեց պատանուն այն անբնակ տնակի մէջ և փակեց գոներն ետևից։ Յետոյ վազեց դէսլի թատրոնը՝ խաղաղութիւն հաստատելու համար, եթէ շփոթը տևելու լինէր, ինչպէս որ նա սպասում էր, արդէն հեռուից լսելով մոլեզնած դերասանների դոփիւնը, գոռում դոչումը, իրարարանցումն ու հայկոյանքը։

Դեռ մի քառորդ ժամ էլ անցած չէր լինիլ Յիսուսին, կամ Փիդէին կողպելուց յետոյ, երբ տէր Սետէմբերէն ուժգին բաց արաւ նրա բանտի դուռն և ներս ընկաւ գոռալով։

— Փիդէլիօն, այ Փիդէ, Փիդէկ, — և որովհետև ոչ ոք պատասխան չէր տալիս, ոկսաւ ևս աւելի թունդ գոռալ — Փիդէկ, Փիդէկ — և որովհետև գարձեալ լուռ էր ամեն բան — Փիդէլինօ, այ դու...¹¹

Լաւ է, որ իմաստուն տէրտէրն խոկոն կանգ առաւ և որ և է անէծք չփախցրեց շըրթունքից։ Նա զարկեց իւր բերնին և ոկսաւ ըոլոր անկիւնները խուզարկել, բայց և այնպէս ոչինչ չքդտաւ։ Այդ միջոցին կայծակի պէս մի միտք անցաւ նրա զլխով, թէ մի գուցէ սատանան ազատած լինէր Փիդէկին։ Բայց և նոյն ըոպէին սփոփեց իրեն ասելով. իհ, ինչ կայ. նա միայն խոռոչել է ինձանից, որ ես իւր հետ մէքիչ կրպիտ վարուեցայ։ Հապա եկ փորձեմ իմ թալիսմանը։ Եթէ Փիդէկս դեռ չէ ընկել զժոխքի մէջ, ես իմ թալիսմանով սատանայի կողերը կըփշրեմ ու կըստիպեմ յետ տալ ինձ իմ Փիդէլին՝ վարդի նման թարմ ու սիրուն։ — Այնուհետև նա զոչեց հզօր ձայնով.

— Փիդէ, դէ մի փակիր ականջդ, այլ լիիր հոգևոր հօրդ խօսքերը։ Ահա ես յետ եմ բերել քո հրացանը, որ քիչ էր մնացել եղբայրներիդ վրայ արձակէիր, — յետ եմ բերել, որովհետև նրան թշնամիների դէմ դորձածելու ժամն արդէն հասել է։ Մենք խոյսն արշաւում ենք Փրանսիացոց վրայ։ Ուրեմն, ով Փիդէ, եթէ դու ակտը էլ գուրս չսողաս, քո հրացանը թղենու վրայ կըկախեմ — և անց ու դարձ անող գեագաները նրա վրայ նայելով...

— Տէրտէր ջան, զգոյշ կացէք, լարը կա-

բող է կտրուել, եթէ նրան շատ ձիդ քաշէք, մոմռաց Փիդէլիօն և ուղիղ նստաւ անկողնի մէջ, ուր թաքնուել էր վերմակի տակ, ձեռքերը բարկութիւնից մինչև արխւն կրծուելով: Ես ներում եմ ձեր կոռուփները, որովհետև առաջ էլ տուել էիք ինձ մի քանիսը, — ներում եմ և աքացիները, թէւ ոչ այնքան յօժար սրտով, — որովհետև դեռ երբէք ինձ տքացի չէիք տուած. — սակայն այդ էլ թող ներուի: Բայց որ դուք վերջապէս կամենում էք և ծաղրել ինձ, — այդ բանն արդէն, Աստուած վկայ...

— Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ի վերայ սնուտեաց, որդեակ իմ, քանզի ով գիտէ, թէ ինչպէս շուտ պիտի մատչիս նրա աթոռին: Լսիր, Փիդիկ ջան: Թու զիտես թէ որչափ մենք վստահ էինք, որ Քրանսիացիք այլ ևս չպիտի նորողեն պատերազմը. այս վստահութիւնը փուչ դուրս եկաւ: Գիտես նոյնպէս, որ զինադուլի պայմանաժամը չորս օրից յետոյ պիտի լրանար. արդ իմացիր, որ թշնամին հաւասոն ու խօսքը ուրանալով յանկարծ ընկել է մերոնց վրայ Բարբաջիօթ մօտերքում:

Ալդպէս էլ պատահել էր միտաւի: Զինագուլը 1768 թ. օգոստոսի 4-ին լրացած լինելով, Քրանսիացիք յանկարծ պաշտրել էին Պատրիմոնիօն: Նրանք թուով 300 մարդ էին 18-ի

դէմ, ուրեմն և կալոր էին հեշտութեամբ յաղթանակ զրուել: Բայց և այնպէս հէնց առաջին ընդհարումից յետոյ սախալուեցան յետ քաշուիլ, որովհետև նրանց բէլասպէ զօբալաբն ընկել էր այդ փառաւոր կոտի մէջ: Վիւս օր զնդերը Գուանմէզօն մարէշալի և Պարքեօֆ կոմսի առաջնարդութեամբ՝ ևս աւելի մեծ թւով ու հրեաներով արշակուցին Պատրիմոնիօ և Բարբաջիօ քաղաքների գէմ, որոնք մի կողմից արդելում էին զէսպի Սան Ֆլորենցո և կրկու ներսերն տանող կիլմերը և միւս կողմից՝ դէպի Կոնյա և ուրեմն Կապօկպալո բերող ճանապարհը: Հարկաւ նրանք յաղթեցին, ստիւցն միտին մի փոքրիկ վաշտի վրայ, որ ոչ ուռմը ունիր, ոչ պարէն, ոչ էլ պաշար: Ընդհանրապէս ասվում է, թէ նրանք բնաւ չէին յաղթիլ, և կամ աւելի մեծ կրտսետ կ'ունենալին, եթէ կորսիկացի մեծաւորները, — որոնք արդէն կաշառուած էին թշնամուց, — ուսպմի Շերմ լուրջամաս միջոցին չարգելիին իրենց խմբերին դէպի յառաջ զրոհ տալու և գաշցն բռնած մարտնչելու մարդ մարդու գէմ, — ասելով նրանց, թէ միայն դիւահարներն ու խուժդուժ որիւ կանելն են՝ այդպէս կռւում, այլ ոչ թէ քաջերն ու քըլստոնեաները: Այս իմաստակ դաւաճանների թւում պատմութիւնը յիշատակում-

Է ֆոլլաչէի անունը: Եթէ; բանը լուս հետազօտենք, զուցէ որիշ անուններ էլ կրդտնենք. սուկայն այդ մի վմար աշխատաւթիւն կըլինէր: Յուղան ընդ միշտ կտակիլ է իւր անունը մատնիչներին, և այդ հերիք է:

Կոր ստացի, թէ կորսերը լինաւ. պաշտը չունին, ոչ էլ ծուներ: Խոկ և խոկ գտառիմոնիօի մօտենիքամն էր, որ մի ֆրանսիական դինուոր, տեսնելով գաշտում մեր խոիջի նալիլիին հոգեւարքի մեջ ընկած, նրա վերքերը կապում է—պատճառ. ֆրանսիացիք միշտ զթառէր են զետի վիրաւորներն ու մետեղները—և տալու հորցնում.—Տօ, տատանաներ, այս լինչափ, ու էք լանդդնում զաք կոտի դուրս զալ, քսինի որ ոչ շարժական հիւանդանոց ունիք, ոչ էլ վիրաւորչ: Այդ բանին կորսը պատասխանում է—Մինք մեռնում ենք:

Սակայն զտանտիք գետի մեր կանաքին:

—Ուրեմն Կոնցան անձնատուր է եղել, հարցըից շտապով ֆլոդէլիօն:

—Կոնցան զեռ քաջ կանդնած է, պատասխանեց քահանան. Նրան պաշտպանում է Քիակոմ զնդապիտը: Բայց լինչ կարող է նաև անել իւր քսան սպահակով և մի հատիկ թնդանօթով:

—Սակայն ինչու մենք ամենքս էլ չենք շտապում նրան քդնելու:

— Զի՞ որ, որդեակ, ես էլ հէնց զրա համար եմ եկել քեզ այս բանտից հանելու:

Այս ասելով նրանք երկուսն էլ դուրս թռան տանից և հասնելով—միշտ վաղիվագ—փողոցի ծալրին, ֆեգէլիօն մի որսի շան պէս շնչասպառ՝ յանկարծ ասաց տէրտէրին.

—Տէրտէր ջան... թող ինձ վաղ տամ գէպի տուն... հասկանո՞ւմ ես... նա ութսուն տարեկան է... եթէ ես ընկնիմ, նա մենակ կըմնալ... Նրան այլ ևս մի անգամ չհամբուրած չեմ կարող քեզ հետ վագել... շուտ կ'անեմ... դու միայն շարունակ յառաջ գնա... ես յետոյ կըմիանամ քեզ...

—Պէ գնա, որդեակ, գնա: Եւ մէկը մի կողմ սրացաւ, միւսը՝ ուրիշ:

Արդեօք տեսած էք երբէք մրջիւնների մի երամ ցորենակոյտի վրայ թափուելիս: Ահա այդպէս էլին վիստում Կանաքի բնակիչները—մարդ ու կին, ծեր ու տղայ, վարդապետ ու աշխարհական: Լրաբերը մի բարձր տեղ կանգնած՝ մի առ մի պատմեց ժողովրդին ամեն բան, ինչ որ պատահել էր կռուի դաշտում, և ասաց, որ Կապօկորզօին սպառնում են երկու Փրանսիական լիքը՝ զնդեր,—թէ միւսներն էլ գալիս են նրանց ետևից,—թէ նրանք բերում են ծանր ու թեթև թնդանօթներ, նրանց

Հետեւում էր և մի կազմ հեծելագունդ։ Այնու-
հետև Զիուղիպէ Բարբաջին, տէր Սետէմբըէն
և ուրիշ մի քանի աւագներ, խորհուրդ տե-
սան իրար հետ և մտածելով, որ յիմարութիւն
կըլինէր իրենց խառն ու անգէն բազմութիւնը
թշնամու դէմ արձակել, —որոշեցին մի քանի
քաջ տղամարդ ընտրել և ուղարկել Նօնցալի՛
պահակ վաշտն ամբացնելու համար։ Որոշեցին
նոյնպէս խնդրել գօրավարին՝ յառաջ վարել մի
կազմ զունդ, մինչ Կապօկորզօի նորընտիր զի-
նուորներն ազատ խմբելով կըտագնապէին թշշ-
նամուն։ Կանարացիք, որոնք Սուրբ Գրքի ա-
սածին պէս վափագում էին իրեւ մի մարդ
յարձակուիլ թշնամու վրայ, սաստիկ շփոթուե-
ցան, երբ այս վճիռը լսեցին։ Բայց այնուամե-
նայնիւ պէտք էր, որ աւագանու կամքին հնա-
պանդէին։ Անուանի երիտասարդներից ընտրուե-
ցան հարլւր արագուն ու քաջամիրտ տղամար-
դիկ։ Եւ որովհետև հէնց այդ միջոցին Զիա-
մաթէօի ջահիլ կինը կորել էր, ուստի ոմանք
կարծեցին, թէ նա դնացած կըլինէր Օրսանտօի
և ֆրանչէի մօտ, —որոնք նոյնպէս անհետացել
էին, — խնդրելու համար, որ նրանք իրենց որ-
դու և վեսալի վոխարէն մի ուրիշ զինուոր
վարձեն. և թէպէտ մի քանիսն այս բանի
վրայ տրտնջում էին, բայց շատերն էլ ընական

համարելով կնոջ ընթացքը, ասում էին թէ
պէտք չէր վատասել նրան։

Բայց որչափ էին սիսալվում նրանք։ Որով-
հետև ահա նոյն բոպէին երեքն էլ միասին —
նորահարսը, հայրն ու աները — երեքն էլ մի մի
հատ հրացան բռնած՝ եկան մտան ժողովրդի
մէջ և քաջալերիչ խօսքերով Զիամաթէօին ա-
ռաջարկեցին այդ հրացանները։ Սակայն նա
վերցրեց միայն այն գէնքը, որ տալիս էր Կա-
տալինան, և ժպտալով ասաց միւսներին.

— Որովհետև ես կարող եմ բռնել միայն մի
հրացան, ուրեմն կըներէք, որ իմ կնոջ տուածն
ընդունեմ։

Կատալինան որ արդէն բոլոր սրտով կա-
պուած էր իւր մարդու հետ, մի աջը նրա ու-
սին դրաւ, միւսովին իւր դէմքը ծածկեց և յե-
տոյ գորովալիր նայեց նրան։ իսկ յուդուած մար-
դըն երեք կամ չորս համբոյր տուաւ նրա ճա-
կատին, և ես վստահ եմ, որ Կատալինան չէր
յօժարուիլ փոխանակել այդ համբոյները նոյն
իսկ Ս. Կուսի սատեղավառ պսակի հետ։

Պիտի երևակայէք, յարգոյ պարոն, որ այս
բոլոր դէմքերն իմ երկար բարակ պատմելուց աւելի
շուտ անցան։ Ընտրուած հարիւր մարդիկը հապ-
ճէպ փութով շտապեցին դէպի Նօնցա և չթո-
ղին մինչեւ անգամ, որ թատրօնի դերասաննե-

ըլ գէթ իրենց հազուստը փոխէին։ Պատահած գժութեան վրայ էլ խօսք չկար։ Քրիստոսն ու Մաղքէոսը հաշտ հաշտ էին միասին դնում, որովհետեւ համբուրուելուց ու կրկին մտերմանալուց յետոյ նրանք դարձել էին առաջուանից աւելի սերտ ընկերներ։ Հերովդէս թագաւորը գնում էր ետևից. իւր ոսկեթուղթ պսակը նաշպրտել էր մի ծառի վրայ, իսկ արքայական պատմուճանը դեռ հազին ունէր։ Յուդան գնում էր զրահավառ բարբաջիռ քամակից, իւր վարչութեամբ յառաջ տանելով Քրիստոսին, առաքեալներին, հրէաներին ու հռոմայեցոց—ամենքն էլ սպառազէն, այնպէս որ նրանց վրայ նայելն անգամ մի քէփ էր։

Այսպէս յառաջ դիմելով նրանք արդէն հասել էին Սև ժայռին, երբ յանկարծ նրանց հանդէպ ժայռի ետևից դուրս ելան Անջիօլամարիա Թոռմազին, Անտօնֆիլի Պադօվանին, Քիանկարլօ Գօմինիչին և Դէցիօ Սանտէլին—բոլորն էլ լաւ ընկերներ, և ուրիշ մի քանի ազգական մարդիկ։ Որովհետեւ յայտնի էր թէ նրանք Նօնցա բերդի պահակից էին, ուստի շատ մեծ եղաւ մեր զինուորների սարսափը յանկարծ նրանց տեսնելիս, և այս պատճառով ամենքն էլ միաբերան գոչեցին։

— Նօնցան առնուած է։

— Աչ, դեռ առնուած չէ, պատասխանեցին չորսը։

— Հապա ինչո՞ւ էք այս տեղ եկել։

— Իսկ դուք ո՞ւր էք գնում։

— Մի՞նք. գէպի Նօնցա—գէպի Նօնցա։

— Լաւ ուրեմն. մենք էլ կ'երթանք ձեզ հետ մլասին և ճանապարհին կըպատճենք, թէ ինչո՞ւ որոշեցինք դուրս գալ բերդից։

Եւ ապա Դէցիօ Սանտէլին սկսաւ պատմել.

— Թէև Քիակոմօ գնդապետը բերդի ո.ազմական պէտքերն արդէն վազուց հոգացել էր, բայց ուտելիքի և մանաւանդ ջրի մասին մինչեւ յուլիսի 18 օրը փոյթ տարած զինելով, հէնց նոյն օրը տասնչորս մարդ արձակեց, որպէս զի գնան և փայտ, ջուր, հաց և ալիւր բերեն։ Սակայն 19-ին, երեկոյեան պահուն, թշնամին վրայ հանելով արդէն կանչ առաւ բերդի առջեւ, այնպէս որ ոչ կարելի էր դուրս գալ բերդից, ոչ ներս մտնել, — այն ինչ մենք մնացիլ էինք միայն երկու հատ հացով ու մի կուժ ջբով։ Տարակոյս չկայ, որ թշնամուն ճանապարհ ցոյց տուողները ամեն ծակ ու ծուկ լաւ ճանաչող մարդիկ են, գուցէ և երկար ժամանակ այս տեղ բնակած Փրանսիացիք. սակայն աւելի հաւանական է, որ մատնիչները, ի յաւիտենական նախատինս մեր երկրի, բուն

կորսեր եղած լինին։ Գիշերուայ դէմ պահապաններից սմանք փորձեցին դուրս սօղալ բերգից, բայց տեսնելով, որ թշնամին բազմաթիւ պահակներ է զրել պարապի շուրջն և դռների մօտ,—հաւաստի եղան, որ այլ ևս փրկուելու հնար չկար։ Վերջ ի վերջոյ, երբ որ մեզ սպառնացող վտանդի մեծութիւնը լիովին յայտնի եղաւ,—Քիակոմօ դնդապետն իւր մօտ կանչեց մեզ բոլորիս—միայն Անտոնֆիլի Պաղօվանին մնաց դրսում իբրև պահանորդ,—հրամալեց նստել սեղանի շուրջն և ասաց.

«Զինուորներ. երբ որ մի բերդակալ ձախորդութեան մէջ է ընկնում,—ինչպէս որ ես եմ ընկել,—օրէնքը պատուիրում է, որ նա, որոշ հրամաններ տալուց առաջ, ռազմական ատեան կազմէ և նրանից խորհուրդ հարցնէ։ Ես էլ ուղում եմ արդապէս անել և վճիռներս ձեր կարծիքի վրայ հիմնել, եթէ դուք ինձ քաջ դինորի պատասխան տաք։ Որ մենք բերդը պաշտպաններու անկարող ենք,—ինքնայալու է. ահա սա էլ (այս ասելիս նա ցոլց տուաւ սեղանի վրայի կիսատ հացն և տապալեց բաժակը, որի մէջ մի կաթիլ էլ ջուր չկար,) բաւական պարզ ապացուց է իմ խօսքին։ Սակայն եթէ մենք անզօր էլ լինինք պահպաննել բերդը, այսուամենայնիւ կարող ենք անել մի ուրիշ բան, որ

թէ մեզ պատիւ կրբերէ և թէ հալրենեաց համար օգտաւէտ կրլինի։ Եզուց մենք կըմարտնչենք, ինչքան որ ուժերս հասնի, և երբ այնուշետև ֆրանսիական զինուորները—բոլորը մին է, ոմբակոծեն պարխսպը թէ ոչ—դունգադունդ մեզ դէմ գրոհ տան, —ես թոյլ կրտամ որ նրանք հանգիստ բարձրանան, և հէնց որ տեսնեմ, թէ մեծ մասն արդէն վերեւումն է, փողս կրփչեմ և դու, Քիանկարլո եղբայր, կոյն պատրոլից վառօդի շտեմարանին կըդնես, և մենք ամենքս միասին կըթռչենք Աստուծու մօտ, որ յուսով եմ՝ բաց զրկով կընդունէ մեզ»։

Այս տեղ Քիակոմօ դնդապետը քիթը սըրբեց ու շարունակեց.

«Ո՛ր կողմից էլ զործին նայենք, սա այնպէս ձեռնտու է թւում մեզ համար, որ այս մասին մի բառ անգամ կորցնելն աւելորդ է։ Բայց իբրև ձեր առաջնորդ՝ պէտք է այլ ևս մի քանի խօսք ասեմ ձեզ։ Այս կերպով դէպի միւս աշխարհը չողելիս՝ մենք կ'ունենանք մեր առջևից հազարաւոր ֆրանսիական կարապետներ, այնպէս որ վերեւում մեզ շատ մեծ մարդիկ կըհամարեն։ Հարկաւ մենք իսկոյն կըբաժանուինք նրանցից, որովհետև նրանք դժոխք կ'երթան, ինչպէս և բոլոր անօրէն ու գաղանային հոգիները, որոնք շղթաներով կաշկան-

դում են անմեղ ազգերին. իսկ մենք կ'երթանք արքայութիւն, վասն զի, պատիւս վկայ, եթէ արքայութեան դռները բաց չլինին հայրենեաց համար նահատակուող քաջերի առջև, Էլ չգիտեմ, թէ ովք է նրա մէջ մտնելու: Այս էլ, տղայք, ի նկատ առէք, որ եթէ մարդս ոչ ծերութիւն ունենար, ոչ էլ օրհաս,—այն ժամանակ ես էլ ձեզ այսպիսի խորհուրդ չէի տալ: Սակայն ինչ էք ուզում: Վաղ թէ ուշ ամենքս էլ պիտի մեռնինք. և, քանի վաղ մեռնինք, այնքան շուտ կ'ազատուինք մահուան ձեռքից, որովհետեւ Աստուած նրանց է վաղօրօք կանչում իւր մօտ, որոնց նա սիրում է: Աւեմն՝ յառաջ քան թէ մեր հոգին որ ևէ խիթի կամ թէ հազի և կամ ուրիշ ախտի պատճառով մահուան մատնենք, կամ թէ կարճ—այն հազարաւոր հիւանդութիւններին զոհ գնանք, որոնք յամբ յամբ մաշում ու տրորում են մեզ մահճի մէջ,—աւելի լաւ, աւելի փառաւոր և աւելի զուարճալի չէր լինիլ—մի տրաքոյով թռչել երկինք, իբրև վերաթևող հրեշտակներ: Հարիւր, այս, հազար անդամ աւելի լաւ կրլինէր այդ: Բայց դուք կ'ասէք. իսկ մեր կանաչքը, մեր որդիքը:—Դէ ի՞նչ վնաս: Միթէ կարծում էք, թէ նրանք անտէր կըմնան: Միթէ ի հնուց սովորութիւն չկայ մեր երկրում տմեն կիրակի որբերի և այ-

րիների հողը հերկելու. և մը կիրակուայ հանգիստը կարող է աւելի հաճոյ լինել Աստծուն, քան թէ այդպիսի աշխատանքը: Մի հօր փոխարէն, որ կորցնելու են ձեր որդիքը, նրանք կ'ունենան այնքան հայրեր, որքան որ կորսեր կըմնան մեղնից յետոյ: Այսուհետեւ յոյս էլ կայ, որ մեր պատկերները քաղաքալին խորհրդարանի մեծ սրահը կըդրուին. որովհետեւ այդպէս է հրամայիլ զօրավարը կռւում ընկնող քաջերի համար, և այս հրամանն անշուշտ կըկատարուի, եթէ նա արծաթ ունենալ և Կորսիկան—նկարիչներ: Մինչև այն ժամանակ քահանան ամեն կիրակի մեր անունները կըլիշատակէ Աւետատարանը կարդալուց յետոյ—հասկանմամ էք, իսկոյն Աւետարանից յետոյ մեր անունները կըլիշէ: Զէ որ դրանով մեր ընտանիքներին էլ փառք կըհասնի: Սակայն այս դեռ բոլորը չէ: Զեր որդիքն իրաւոնք կ'ունենան ձրիաբար ուսում ստանալու համալսարանում և, ենթադրելով թէ նրանց խելքի տախտակները պակաս չեն, նրանք հռչակաւոր գիտնականներ կըդառնան: Հետեւաբար լաւ կըսեցէք, քանզի խօսքս վերջացնում եմ. իմ առաջարկածը մի տիսպիսի ազնիւ բան է, որ ձեզ անշուշտ դուր կըգայ, և այնպէս շահաւէտ, որ դուք սիրով կըկատարէք. և որովհետեւ դուք ինքներդ աւե-

լի լաւ բան չէք հնարիլ,—ուստի աղառում եմ
ձեզ զուր տեղը ինելք մաշելու նեղութիւնից։ Արդ
պատերազմական ատեանը փակուած է, և մեր
վճիռն այս է, որ վաղեան օրը մենք բոլորս
միաբան սիրով դէպի երկինք կ'օղապարենք»։

Այս ասելով նա արձակեց մեզ և այդ ե-
ղաւ ֆիակոմ գնդապետի պատերազմական խոր-
հուրդը։

ՊԵՆՔ իշանք գետնայարկի դաշլիճը և սե-
ղանի շուրջը նստած՝ ուզեցանք քնել։ Սակայն
յաջորդ օրուայ վերաթեման գաղափարը մեր
քունը հալածեց. դրանից զատ՝ գնդապետի փալ-
տի ոտն էլ շարունակ բախելով վերի սրահում,
մեր հանգիստը խանդարում էր։ Վերջապէս ըա-
խումը հատաւ, և մենք կարծեցինք, թէ ծե-
րունին արդէն նիրհած կըլինի։ Ես էի առաջի-
նը, որ այն ժամանակ զլուխս վերցնելով ասացի.
—Տղայք, քնել էք։

Ընկերներս միաբերան պատասխանեցին.

—Քնել։ Ինչել ես մտածում. զժուել ես
ինչ է։

—Ուրեմն գնդապետի ճառը չէք հասկացել։
Եւ մէկն ասաց.

—Ֆամծմում եմ, բայց դեռ լիովին չեմ
կուլ տուել։
Իսկ միւսը.

—Զհասկանալուս պատճառը չեմ կարող
ասել, բայց այսքան զիտեմ, որ ես բոլորովին
ուրիշ կարծիքի եմ։

—Հաւատում եմ, նկատեցի ես, և հաս-
կանալի է, թէ ինչո՞ւ զնդապետի վճիռը ոչ ձեզ
է դուք գալիս, ոչ էլ ինձ, որ զիտեմ, թէ եր-
կուսը մէկից աւելի է։ Բերդը պաշտպանել մենք
չենք կարող այդ ակներև է. ուրեմն ամենալաւն
այն կըլինի, որ զնդապետի ասածին պէս՝ այս
բերդը յօդս ցնդենք այնքան ֆրանսիացի զինուոր-
ներով, ինչքան որ յաջողենք ներս որսալ։ Մին-
չեւ այս կէտը մենք միաբան ենք ծերունու
հետ։ Սակայն այս տեղից սկսած՝ ճանապարհ-
ները բաժնվում են։ Նախ, վառօդի շտեմարա-
նին կրակ տալու համար բաւական է միայն մի
պատրոյիկ կպցնել նրան կամ թէ սիզառի մո-
խիր թափ տալ վրան և կամ թէ պողովատով
կայծքարի խփել. և այս բոլորն անելու համար
մէկ մարդն էլ հերիք է։ Խոկ մենք թւով աւելի
ենք, և ես չեմ կարող ըմբունել, թէ ինչ հարկ
կայ և կամ ինչով է օգտակար մէկ մարդու տեղ՝
հինգը զոհել… Ամեն գործում ինայողութիւն
ասուած բանը զովելի է. ուրեմն ինչո՞ւ այն տեղ
միայն, ուր ինդիբը մարդուս կեանքի վրայ է,
շռալութիւնը նախամեծար համարուի։ Երկրորդ,
մեր բանը ջոկ է, գնդապետինը—ջոկ։ Նա կա-

դում է, և կարող էլ չէ ձի նստած դաշտ դուրս դալ. մինչ մենք, փառք Աստծու, այծիկի ոտներ ունինք, և չէ կարելի աւելի վատ պատժել մեղ, քան ստիպելով, որ պարսպի ետևեց մարտնչենք: Երբորդ, գնդապետն ունի միայն մի ոտ և ով դիտէ՛ քանի՞ ոսկոր աւելի պակաս և քանի տարի աւելի շատ, քան թէ մենք. ուրեմն նա արդէն կանխաւ այնքան տուրք է վճարել մահուան, որ այժմ կարող է մի փոքրիկ բանով էլ վերջացնել իւր հաշիւը նրա հետ. մինչդեռ մենք առողջ ու զուարժենք տակաւին առոյդ ու կայտառ. ուրեմն պէտք է, որ մեզնից ամեն մէկը գեռ չմեռած՝ հայրենիքին ծառայէ: Ով որ պարտքը ուշէ վճարում և կամ բնաւ չէ վճարում, նրան կ'ասեն խաբեբալ. բայց լաւ տնտես չեն առիլ նրան, ով որ պարտքը պայմանաժամից առ աջ վճարելու տենդ ունի: Վերջապէս Կորսիկան այնքան էլ զինուոր չունի, որ կարողանար շռալլաբար վարուել նրանց հետ. ընդհակառակն, նա պէտք է հաշուելով հաշուէ արեան ամեն մի կաթիլը, եթէ ուզում է յաղթել թշնամուն, և կամ,— եթէ Աստուած ալլապէս է որոշել, —պէթ պատուով ընկնել պատերազմում, որ նա կոչուած է վարելու իրենից 258 անգամ աւելի մեծ աղղի դէմ: Ուստի այս ըոպէիս, ես իմ կեանքը զուր

զոհելն աւելորդ համարելով, երդվում եմ ձեզ հանդիսաբար, թէ իմ որդոց երեսն անգամ չեմ ուզում տեսնել, մինչև որ պատերազմը չաւարտի: Եթէ ես ընկնիմ, դուք կըլինիք նրանց հայրը. թէ ով դուք ընկնիք և ես մնամ կենդանի, ես կըլինիմ նրանց հայրը: Եթէ մենք յաղթող հանդիսանանք և բոլորս էլ մարտից ողջ ողջ դուրս գանք, այնուհետև Աստծու շնորհած օրերը մեր սիրելիների հետ կըփայելենք: Բայց եթէ յաղթուինք ու դարձեալ կենդանի մնանք, մեր զաւակների հետ տանը կըփակուինք և մեր կորած ազատութիւնը միասին կ'ողբանք:

Ընկերներս ձայնակից եղան ինձ և երդմամբ յանձն առին այդպէս անել: Այնուհետև ես շարունակեցի.

—Եկէք այս բոլորը զրենք և թուղթը գլնդապետին թողնենք, որ նա մեղ անարդ երկչուտ չհամարէ: Ես չէի ուզիլ, որ նա միւս աշխարհում շիլ շիլ նայէր իմ վրայ: Մինչ ես նամակը կըդրեմ, դու, Անջիօլամարիա, դուլպաներդ հանիր և դուրս գնա այս ամենը Անտօնֆիլին պատմելու: Սակայն զզոյշ գնա, որ աղմուկ չհանես, եթէ ոչ՝ գնդապետը կըզարթնի, և այն ժամանակ—բարով մնաս, հոգիս: Յետոյ հաւաքեցիք մեր ամեն թոկերը, ամուր

կապեցէք մէկը միւսին, ամեն մի կանգունի վրայ մի մի հանդոյց շինեցէք, որ կարելի լինի պինդ բռնել: Գնացէք և որքան կարելի է շուտ հոգացէք այս բոլորը:

Կէս գիշերուայ երրորդ պահուն ամեն բան արդէն պատրաստ էր: Գնդապետի համար գըրւած նամակը մենք սեղանի վրայ թողինք, բոկոտն դուքս ելանք և զիշերային մթութեան մէջ խորխափելով՝ արագ արագ հեռացանք: Փայռի ամենաբարձր դադաթին մենք մի հաստ գերան դրինք ծերպի առջև, թոկի մի ծայրը նրան սլինդ կապեցինք, միւսը վայր ծգեցինք և ապա թէ նրան ամուր բռնելով սկսանք իրար ետելից վայր սահել: Անը բախտն էր, որ գիշերը խաւար էր. որովհետեւ եթէ մենք գէլժ թիզի չափ բան տեսնէինք, այն ժամանակ սարսափելի անդունդը, որի մէջ իլլկների պէս կախուած էինք բարձր ժայռից, անշուշտ թալուկն կրպատճառէր մեզ և մենք քարերի վրայ գլխիվայր զլորուելով կը ջախախուէինք: Բայց մենք ողջամբ իջանք ծովի մէջ և լողալով հասանք ափին, և այնտեղից ճանապարհ ընկանք գէպի կանարի, որպէս զի միանանք ձեզ հետ և աւելի լաւ յոյսերով պատերազմենք թշնամու դէմ, քան թէ մեր բերդի սլարիսպների ետելից:

— Տօր դու տպած գրքի նման ես խօսում, ասաց հայր Սետէմբրէն: Գուցէ սխալվում եմ, բայց դու լեզուով շատ ճարպիկ ես երևում. տեսնենք, թէ ինչ կ'անես ձեռքերով:

— Per Dio Santo, գոչեց Ֆիդէլիօն, իմ կարծիքով Զիակոմօ գնդապետն իրաւացի էր. աւելի լաւ է մեռնել, քան թէ...

— Հարկաւ, ընդմիջեց նրան Դէցիօն. և այդ ճշմարտութիւնը պէտք է նախ գործով ցոյց տալ, և հէնց այս է պատճառը, որ մենք էլ կամենում ենք ձեզ հետ գնալ:

— Բայց մենք ձեզ համար հրացաններ չունինք:

— Փոյթ չէ. մենք ունինք դանակներ. սրանք հերիք են, որ մենք գնդապետի համար վրէժինդիր լինինք և քաջերի մահով մեռնենք:

Այսպէս յառաջ խաղացին մեր կրտսերը մինչև նաւահանգիստը և արդէն այնուեղից ջոկ ջոկ խմբերով սկսան բարձրանալ գէսլի Խօնցան: Ալեւմտեան քամին թունդ կչում էր և օդն այնպէս պարզ էր, որ ամենափոքր ու հեռաւոր իրերն անգամ որոշ որոշ երևում էին ծովի կողմից և ամեն մի շշուկ լսվում էր: Ուստի անչափ եղաւ մերոնց զարմանքը, երբ որ տեսան, որ կորսիկեան դրօշակը դեռ քաջ պարզուած էր Խօնցայի վայ և բերդից որոտացող

Հրազէնների բոմբիւն էր լսվում: Զգուշութեամք քայլ առ քայլ յառաջ դնալով՝ նրանք—առանց Փրանսիացոց աչքն ընկնելու—հասան, վերջապէս, բերդի մօտերքում գտնուող տներին, և նրանց ականջին լսելի եղաւ ֆիսկոմօ գնդապետի ձայնը, որ դիւահարի պէս դուռում էր.

— Ամենասուրբ Կոյսն վկայ. շտապեցէք, ոմբաձիգներ... նորից շնորհ շնորհ լքցրէք... յառաջ, իշմինիօ, օն յառաջ, Զիունչինթէլօ... քաջ կացէք: Խակ դուք միւսներդ հրացան արձակեցէք: Տէր ողորմեա, ինչ երկար էք փափըսում ումբակների վրայ... դէ կրակ:

Թնդանօթը շանթեց, որոտաց, և նշանն այնպէս ուղիղ էր առնուած, որ գունզը շաշելով գնաց խորտակեց պարսպի ամենաբարձր աշտարակը, որի ետևում թշնամու վաշտերը յարձակման համար ճակատ կազմելու վրաւ էրն:

Նրանցից մի քանիսն սպանուեցան, շատերն էլ դէս ու դէն պայթող քարերից տապալուելով, կարեվէր վայր ընկան:

— Լքցրէք էլի մի անգամ, շարունակում էր մոնչել ֆիսկոմօն, և այժմ կարտէ չներնվ (Երկաթի կոտորակներ): Բայց միայն այն ըստէին կրակ տուէք, երբ թշնամին կիսով չափ մեղ մօտենալ, ոչ առաջ—լսում էք: Այժմ առէք մուռկէ թներդ և արձակեցէք, ինչ-

պէս որ կամենաք: Յառաջ, Պիլօնի. այժմ դու, Թիգիուտօ: Խակ դու, Պանիկաչիօ, մնց ես բըռնել հրացանդ:

Եւ հարուածները հնչեցին իրար ետևից մի փառաւոր ու դեղեցիկ յաջորդութիւն պահպաննելով:

— Ո՞վ դուք թշուառ խկարովտացի Յուգաներ, ինչպէս յանդգնեցաք խալել մեզ, ասելով թէ ֆիսկոմօ գնդապետը մենակ է մնացել:

— Մենք շուարած ենք ամպերից գահավէժ գլորուած մարդու պէս, պատասխանեցին Դիցիօն և նրա ընկերները բոլորովին շըլմորած:

— Այս բանը մենք յետոյ կըպարզենք, ասաց հայր Սետէմբըէն բարկութեամբ: Սակայն տղայք, որքան կարելի է մօտեցէք. հրացան մի արձակէք, մինչեւ որ ես նշան չտամ. Խակ յետոյ ամենքդ էլ միասին տռաքացրէք: Ձեզնից խրաքանչիւրը թող միայն մէկ թշնամու նշան դնէ, և այդ թշնամին թող անշուշտ դառնայ մահուան բաժին: Միւսներին թողէք. աչք դրէք միայն հրէտաճիգ դռէնադերներին և սպասեցէք, ինչպէս որ հրամայել է ֆիսկոմօ գնդապետը, մինչեւ որ նախարշաւ գունդը ճանապարհի կէսն անցած լինի և յարձակման ձեռնարկէ:

Հայզէ, նօնցայի բերդը:

Եւ յիրաւի Փրանսիացիք սկսան յարձակման պատրաստուիլ, ասես թէ ամաչելով նախ ոմբակոծել, պատերազմի կանոնին համեմատ, թշուառ բերդի պարիսպը, որ նրանց կարծիքով շատ շատ՝ երեսուն կամ ամենաշատը—լիսուն պահակից պահպանուած պիտի լինէր: Նրանց գլխաւոր սպարապետ կոմս Գուանմէզօնը, որ այդ միջոցին քաջամարտիկ ասպետի համբաւ ունէր, ամբողջ զօրութեամբ նօնցալի գէմ գրոհ տալը իւր պատուից ստոր համարելով, կամ թէ հաշուելով, որ այնտեղ մի մեծ փառք գտնելու չէր,—չէր գուրս եկել իւր զօրքի հետ:

Նոյն միջոցին կանարացիք վերեկից տեսնում էին ամեն բան, ինչ որ լինում էր թշշնամու բանակում, որ արդէն լիովին պատրաստ էր յառաջ դիմելու: Նրանց սիրտը թշնդում էր յետին ճգնաժամին սպասելով և նրանք այլպէս անշարժ կանգնած էին՝ մատերը հրացանի ճնշակին, երեսները կոթին դրած, մի աչքը փակ, միւսը փողի երկարութեամբ թշնամիներից մէկին շեշտած: Բերդից դուրս շանթող ու թշնամուն այնքան կորուստ պատճառող վերջին հարուածից յետոյ մերոնք տեսան, որ նրանց այլ ևս ոչ մի բան չէր մնում անել, բայց միայն մեռնել, և մեռնել այն պայմանով,

որ Նօնցալի անկումն ընդ միշտ մի զարհուրելի արձան մնայ ուխտանենդ թշնամու համար:

Բայց նոյն բոլէին, երբ ստորին պարսպի դռները խրամատվում էին պաշարողների հարուածից, յանկարծ—տարօրինակ երևոյթ—աներկիւղ յառաջ եկաւ, իւր հետ միայն մի թըմբեկար բերելով, Բօղըմօն գնդապետն և իւր սրին կապուած մի սպիտակ դրօշակ ճօնելով անշարժ կանգնեց բերդի առաջ: Փոքը ինչ յետոյ բերդի աշտարակի վրայ, ուր պարզուած էր կորսիկական դրօշակը, նոյնպէս երեցաւ մի սպիտակ առաջաստ: Բօղըմօն գնդապետը, միշտ իւր թմբկահարից անբաժան, արձակ համարձակ ելաւ դէսի վեր և գրեթէ արդէն հասել էր աշտարակի ստորոտին, երբ յանկարծ մի ահեղ ձայն լսելով վերևից, քար կտրած կանգ առաւ:

—Կայ: Այդ ովէ է, գոչեց ձայնը:

—Նորին ամենաքրիստոնեալ մեծութեան պատղամաւորը:

—Ի՞նչ է կամենում ինձնից նորին ամենաքրիստոնեալ մեծութեան պատղամաւորը:

—Նախ բաց արէք բերդի դուռն և յետոյ կ'իմանաք պատղամը:

—Ես չեմ բանալ բերդի դուռը: Փառք Աստծու, ականջս դեռ այնքան սուր է, որ կա-

լող եմ ձեզ լսել,—ձայնս էլ այնքան աղդու,
որ դուք էլ ինձ կըհասկանաք:

—Սակայն ոչ. այդ մեզ երկուսիս էլ ան-
յարմար է, մանաւանդ որ ալստեղ քամի է
փշում:—Եւ Բօդրմօն գնդապետը յանդդնաբար
յառաջ գնաց, բնաւ ականջ ըլդնելով ֆիակոնօ
բերդակալին:

—Է՞ս, գնդապետ, զոչեց կըկին աշտարա-
կից հնչող ձայնը. այդ ի՞նչ խաղ է: Ա՛յլ ևս մի
քայլ, և ես ձեզ կըսպանեմ:

—Իրաւ. այդ ուրիշ բան է: Ուրեմն, բեր-
դակալ, ես այս տեղից կըխօսեմ:

—Եւ շատ լաւ կ'անէք, գնդապետ:

—Պարոն բերդակալ, պարոն Գուանմէզօն
կոմսը, նորին քրիստոնեալ մեծութեան սպա-
րապետը, աւելորդ արիւնհեղութեան վերջ տա-
լու փախագով վառուած...

—Լաւ է, լաւ: Զեր մարդասիրութիւնն
արդեօք երբ է սկսուել: Այդ բանը միթէ չէիք
կարող մէքիչ առաջ մտածել, յառաջ քան թէ
ուխտած դաշնադրութեան հակառակ՝ մեր կա-
յանների վրայ յարձակուէիք.

—Մենք հաշուել ենք, որ տասներկու
թնդանօթ ունինք, մինչ դուք՝ միայն մի հատ.
մենք թուով չորս հազար ենք,—այն ինչ
դուք—շատ շատ՝ լիսուն հոգի: Սակայն ես վիճե-

լու համար չեմ եկել այս տեղ, այլ ինձ տրուած
պատղամը կատարելու. ուրեմն լսեցէք: Ինչպէս
ասացի, զուր արիւն թափելու տեղ՝ ձեզնից
ինդրում եմ, որ անձնատուր լինիք:

—Իսկ եթէ չուզենամ:

—Այն ժամանակ բերդը բանութեամբ կ'առ-
նենք և ձեր բոլոր պահակների հետ այնպէս
կըվարուինք, ինչպէս որ պէտք է վարուիլ պար-
ուաւելի յամառութեամբ, ռազմավին ամեն կա-
նոնների դէմ մեղանչելով մի կորած բան պաշտ-
պանող մարդկանց հետ:

—Իրաւ: Բայց եթէ, օրինակի համար, սիր-
աց ուզենայ կըակ տալ վառօդի պահարանին
և Նօնցալի բերդը ձեր և ձեր ընկերների գլխի
վրայ տապալել,—արդեօք ի՞նչ պատիժ կըտա-
լիք ինձ այն ժամանակ—հաճեցէք ասել ինձ,
գնդապիտ:

—Է՞հ, այդպիսի բան չէք անիլ, կարող
չէք անել այդպիսի բան...

—Կըցանկալի իմանալ, թէ ինչնու չեմ կարող:

—Որովհետեւ դա ազնիւ պատերազմ չէր
լինիլ: Այդպիսի բաներ պատահում են միայն
բարբարոս ազգերի մէջ:

—Իմացայ: Մենք էլ բարբարոսի անարդ
անուն չըստանալու համար է, որ ուզում ենք
պաշտպանել մեզ, երբ ձեզ նման բարեկիրթ-

պարոնները գալիս են մեր ազատութիւնը. խլելու:

—Պարոն բերդակալ, ես պատրաստ եմ հաւատալ, որ դուք բաւական հմուտ էք պատերազմների պատմութեան և քաջ զիտէք, որ աշխարհիս ամենամեծ հերոսներն անգամ ոչ թէ վնասել են իրենց համբաւին, այլ դեռ փառք են վաստակել, երբ ժողել են, պատուաւոր պայմաններով, այն բերդը, որ ըստ ռազմային կանոնների չէր կարելի այլ ևս պաշտպանել:

—Դէ լաւ: Պարտքս կատարելով ես կ'երթամ նախ իմանալու զինուորական ժողովի կարծիքը: Մինչև այն ժամանակ դուք տեղից մի շարժուիք և սպասեցէք վերադարձիս:

Մի քանի րոպէից յետոյ, որոնք երկար թուեցան Բօդրմօն գնդապետին և իրօք էլ երկար էին, Քիակոմօ բերդուկալի զլուխը կրկին երեցաւ պարսպի ետեից, և նա այսպէս շարունակեց բանակցութիւնը.

—Պատերազմական ատեանը գեռ ոչինչ չորշեց. նա կամենում է նախ լոել անձնատուր լինելու պայմանները:

—Միալն թէ պահանջէիք: Պարոն սպարապետը յայտնել է ինձ, թէ նա յօժար է իւր կողմից կարելոյն չափ զիջումն անել, և խնդրում է միայն, որ ձեր պահանջը ծարահեղ չլինէր:

—Ճատ ապրի: Ասել է թէ նա ուզում է

մեր գլխարկն առնել, իսկ մազերը թողնել: Ա՛քեղ բան: Ո՛ր վալրենին կ'ուզենար դրանից աւելի անարգել մեզ:

—Կարծ կտրենք. կամենում էք յայտնել ձեր պայմանները, թէ ոչ:

—Խնդրեմ զսպեցէք մէքիչ ձեր ֆրանսիական մոլեգնութիւնը: Մեր պայմաններն այս են, որ նախ—պահանորդ գունդը դուրս կ'երթայ՝ թմբկահարն առջևից, պարզուած դրօշակով և ամեն պատերազմական պատիւներով:

—Թող այդպէս լինի:

—Երկրորդ, պահանորդ գունդը կըպահպահէ իւր զէնքերն ու անօթները:

—Թող այդպէս լինի:

—Երրորդ, պահանորդ գունդն և ամենքը, որ զէնք, են վերցրել Նօնցալի բերդը պաշտպանելու, ազատ կըլինին կամ մնալ և կամ գնալ ուր և կամենան, առանց որ և է պարտաւորութիւն յանձն առնելու:

—Այդ բանին յօժար չենք:

—Ռւբեմն խօսելն էլ աւելորդ է: Վայր իջէք դաշտակից:

Եւ ծերունու զլուխն անհետացաւ պարսպի ետև:

Սակայն Բօդրմօն գնդապետը վերստին յետ կանչեց նրան.

—Պարոն բերդակալ, հէյ, պարոն բերդակալ, ականջ դրէք: Եթէ ես չեմ կարող յօժարութիւն տալ երրորդ կէտին, այդ չի նշանակիլ, որ նա խպառ մերժուած կըլինի, այլ թէ ինձ պէտք է մեծաւորիս մօտ գնալ նրա կարծիքը լսելու համար:

—Ուրեմն չորրորդ—պարոն սպարապետը, կոմս... ինչ է նրա ազդանունը:

—Գուանմէզօն:

—Սրդ Գուանմէզօն կոմսը չի արգելիլ մեզ դուքս հանել մեր բոլոր պատերազմական մթերքը—մեր թնդանօթները, դէնքերը, որպէս և բոլոր պարէնն ու պաշարը:

—Այդ բանին էլ յօժար ենք:

—Հինգերորդ—պարոն սպարապետը կըտայ մեզ ձի, զրաստ և սալեր՝ մեր ուումբերն ու դէնքը, կարճ—չորրորդ յօդուածում լիշտակուած բոլոր բաները դէպի մեր բանակը տեղափոխելու, որ գտանվում է Մուրատօյում:

—Այդ պայմանը չեմ կարող ընդունել:

—Փոլթ չէ. ուրեմն հեռացէք: Իսկոյն սկսում եմ հուր տեղալ:

—Բայց սպասեցէք, ասում եմ ձեզ: Ես կ'երթամ սպարապետի մօտ և խկոյն յետ կըդամ նրա պատասխանը բերելով:

—Դէ դնացէք:

—Տասն ըսպէից կըվերադառնամ. և յոյս ունիմ այնպէս շուտ աւարտելու այս բանը, որ այս տեղ եմ թողնում թմբկահարիս:

—Գրան էլ ձեղ հետ տարէք. շտապելու բան չկայ: Գնացէք և եթէ կամենաք—խպառ կորէք:

Ինչպէս որ բանբերը շուտ գնաց, այնպէս էլ շուտ վերադարձաւ ու յայտնեց, բառերի հեղեղ թափելով, թէ պայմաններից երկուսն անհնարին է ընդունել,—թէ պարոն կոմսը խընդրում է պարոն բերդակալին՝ ներողութիւն շնորհել իրեն և ի նկատ առնել, որ նա, այսինքն կոմսը, անշուշտ յանդիմանութիւն կըստանայ, գուցէ և պատերազմական դադաստանի կըկանչուի, եթէ նա՛ այսքան մեծ սպառագինութիւն ունենալով հանգերձ՝ թոյլ տաչ պահանորդ գնդին նորից դէնք վերցնել արքայական զօրքի դէմ: Խակ գալով դէնքի ու համբարի տեղափոխութեան միջոցներին,—այդ ոչ թէ բոլորովին անսովոր, այլ և կանոնի հակառակ պահանջ է: Որովհետև պարոն բերդակալին էլ անշուշտ յայտնի կըլինի այն հին առածը, թէ «Զէնք մի՛ հանիլ թշնամուդ տնից»:—Եւ ապա—մարդակաճ, շողոքորթական և խմատակ բառեր, որոնք կարծես բնաւ չէին ուզում վերջանալ:

Քիակամօ գնդապետը հանդարտ լսեց այդ

բոլորն և ցամկոտ ձայնով պատասխանեց.

—Պարոն բանքեր, այժմ լսեցէք, ինչ որ ես եմ ձեզ ասելու: Ես կամենում եմ ցոյց տալ պարոն կոմսին, թէ մեզնից ով է աւելի նախանձախնդիր քրիստոնեաների տարադէպ արիւնհեղութիւնն արգելելու: Վերոյիշեալ երկու կէտից, որ նա մերժում է, թող մէկն ընդունէ, միւսը ոչ: Եթէ նա նախանձաւոր է անարատ պահելու իւր անունը,—ես էլ նրանից պակաս չեմ գնահատում իմ պատիւը. նա մասնաւանդ, որ նա գեռ երիաասարդ է, մինչ ես ծեր եմ և այլ ևս անզօր՝ վրէժ հանելու թըշնամուց: Թող այս էլ յիշէ, որ յաղթողը նա է, իսկ պարտուղղը ես, և թէ այս բերդի հետ ես տալիս եմ նրան ամբողջ կապօկրգօի բանալին: Թող նա ընդունէ հինգերորդ յօդուածը, և ես կըհրաժարուիմ երրորդից և պատուիլս երաշխաւոր կըլինիմ, որ բերդի պահապաններից ոչ ոք ձեր դէմ զէնք չի վերցնիլ այս պատերարմի ընթացքում—ոչ կղզու վրայ, ոչ էլ այլուր: Այժմ գնացէք, և եթէ կէս ժամից յետոյ մի դրական պատասխան չըկրէք, —այնուհետև ճարտեսէք ողջ պրձնելու այս տեղից, վասն զի երդվում եմ յանուն անարատ Սուրբ Կուտին, որ բոլոր այս բերդը ունիմ չունիմով ձեր շլինքի վրայ կըթափալեմ:

Բօլդրմօն գնդապետը մտադիր էր ֆրանսիական եղանակով, այսինքն ոշտութեամբ յառաջ տանել սակարկութիւնը, բայց ֆիակոմօ գնդապետը ձեռի շարժումով նշան տուաւ նրան հեռաւալու, և կրկին անհետացաւ պարսպի ետև:

Վրդարե նօնցայի բերդն ամբողջ կապօկրգօի բանալին էր: Մասամբ այդ պատճառով, մասամբ վախենալով, որ բերդին օգնելու համար ամեն մի բոպէ կարող էին լեռներից յանդուզն վաշտեր վայր սահիլ, մասամբ էլ կամենալով նոր ողի ներշնչել ֆրանսիական զինուուներին, որոնք վերջին կոհւների մէջ շարունակ ջարդուել էին, — Գուանմէզօն կոմսը անհամբեր սպասում էր իւր պատգամաւորի վերադարձին: Այս անհամբեր մտատանջութեան միջոցին նա իւր զօրքի սպայակուտով մօտեցել էր բերդին մերձակայ տներին: Լսելով ֆիակոմօ գնդապետի վերջին վճիռը, նա ցոյց տուաւ, իրը թէ կամենում էր գարձեալ փոքր ինչ մտածել, և վերջ ի վերջոյ ընդունեց ամեն բան, միայն թէ գործը շուտ աւարտէր:

Բօլդրմօն գնդապետն անշուշտ մի կորովի զինուոր էր, և եթէ նա բերդը պաշարելու հրաման էլ ընդունած լինէր, այդ նրա քաջութեան առաջին փորձը չէր լինիլ: Բայց և

այնպէս նա սրտանց փափագում էր պատուով խոյս տալ զլիխն մի զնդակ ստանալու և կամ թէ քարերի տարափի տակ չարաչար թաղուած մնալու վտանգից,—մանաւանդ երբ լիշում էր, որ այդ քարերից ամեն մէկի ծանրութիւնն առ նուազն հաղար ֆունտ կըլինէր... Աւտի նա տրախ սրախ յետ եկաւ գէպի աշտարակը, արդ գէն հեռուից ձայն տալով ու թաշկինակը ճօճելով.

— Ընդունուած է, ամեն բան ընդունուած:

Նոյն բոպէին ֆիակոմ զնդապետի գլուխը վերստին բարձրացաւ պատի ետևից. Նրա գէմքը մռայլ էր, բայց ձայնը լիովին հանդարտ, երբ նա սսաց.

— Թէ լաւ: Սակայն, պ. բանբեր, որ և է տարաձայնութեան առաջն առնելու համար մեզ պէտք է դարձեալ կէտ առ կէտ...

— Ինչացն: Մեր մէջ տարաձայնութիւն չէ կարող ծագել:

— Զատ էլ լաւ կըծագի: Amici cari, patti chiarì—լաւ ընկեր, պարզ դաշինք: Գուք գեռերիտասարդ էք, իսկ ես ծեր, և ես փորձով գիտեմ, որ զօրեղների հետ զգուշութեամբ պէտք է վարուել: Ուրեմն կրկնենք: Ընդունուած կէտերն են՝ բերդապահ գունդը գուրս կ'երթայ ամեն պատերազմական պատիւներով. նա կըտա-

նէ իւր հետ զէնքն ու կարասիքը: Կօնցալի պահապան գունդը կ'երթայ ուր և կամենաչ այս պատերազմի մէջ Ֆրանսիայի դէմ ըլկուուելու պայմանով. Նա կ'առնէ իւր հետ իւր զէնքըն ու պաշարը, բոլոր պատերազմական անօթներն ու ռումբերը. Թշնամին մի քառորդ ժամից յետով կըտայ մեզ ձիեր, ջորիներ և բեռնակիր սալլեր: Այսպէս է թէ չէ. բանը վերջացնու թէ չէ:

— Վերջացնաւ:

— Եւ պարոն Գը Գուանմէզօն կոմոր, նոյնին ամենաքրիստոնեայ մեծութեան սպարապետը կըլալոնէ, իբրև մի քաջազարմ և ազնիւ ասպետ, որ նա լիազօր իշխանութիւն ունի այս դաշինքը հաստատելու և որա բոլոր սպայմաններն անմիջապէս կատարելու առանց որ և է բարուրանքի, խարդաւանքի, նենգութեան և կամ ստութեան:

— Բերդակալ, զոչեց Բօդրմօն զնդապետն և ձեռը շարժեց, ասես թէ սուրը մերկացնելու նպատակով.—ձեր չափազանց երկմտութիւնը զրեթէ նախատինք է բերում մեզ:

— Զգոյշ լինելը—իմ սովորութիւնն է. Ես չեմ կամենում վերաւորել ոչ ոքի: Ուրեմն ձեր սուրը պատեանում թողէք. նա չի էլ հասնիլ մինչեւ այստեղ: Արդ ուխտում էք թէ ոչ ճշշ-

դիւ կատարել ամեն բան, ինչ որ լիշտակեցի
այս ըոպէիս:

— Ուխտում ենք:

— Ազնիւ խօսքով:

— Ազնիւ խօսքով:

— Ուրեմն զնացէք և հրամայեցէք, որ ձեր
գուշնադեռները ներս մտնեն. ես էլ կ'երթամ
ելքի պատրաստութիւն տեսնելու:

Ֆրանսիական գուշնադեռները — արդարեւ
ընտիր ու գեղեցիկ մարդիկ — օրինակելի կար-
գով շար ի շար անցան արտաքին պարսպի
դունով և բերդի ստորոտին հասնելուն պէս երկու
մասն բաժանուեցան. մինը կանգ առաւ աշտա-
րակից դէպի ձախ, միւսը դէպի աջ:

Այն ժամանակ յանկարծ ամրոցի դուռը
բացուեցաւ, գուշնադեռները Բօդրմօնի հրամանով
զինուորական ողջոյն տուին և ահա դուրս ելաւ
ֆիակոմօ Կաչէլլա բերդակալը՝ ձախ ձեռին կոր-
սիկեան դրօշակի կոթը բռնած, որ օգնում էր
նրա փախեալ ոտի երերուն քայլին, իսկ աջո-
վըն թմբուկ խփելսվ, որ կախուած էր նրա գօ-
տու ճարմանդից: Գլխին հագին ունէր ոսկէ
փետուրներով զարդարուած մի փեղոյր, և առ-
հասարակ այնպէս էր հագնուած, ինչպէս որ
վայել էր հագնուած լինել զլիսաւոր բերդակա-
լին այդ տեսակ նշանաւոր դէպքերում:

Նա սիզաճեմ և մենակ յառաջ էր գնում,
և յանդուգն ֆրանսիացիք հազիւ էլն կարե-
նում ծիծաղները բռնել:

Այսպէս հեռացաւ պարոն ֆիակոմօն և ոչ
ոք նրան չկետեց: Երբ նա անց էր կենում
Բօդրմօն գնդապետի առջևից, սա բարեւեց նրան
մերկ սրով. ծերունին դադարեց թմբուկ հար-
կանելուց և փեղոյրն օդի մէջ ծածանելով՝
նմանապէս ողջոյն տուաւ խորհրդաւոր լռու-
թեամբ:

Սակայն երբ պարոն ֆիակոմօն վերստին
դուրս հանեց դրօշակի փայտն և այդ փայտն
առաջուանից թունդ գետնին բախելով ուզեց
հեռանալ՝ առանց բնաւ ո՛ր և է նշան ցոյց
տալու, թէ մտադիր էր գէթ մի խօսք ասել
ֆրանսիական գնդապետին, — պարոն Բօդրմօնը
մօտեցաւ նրան և հարցրեց.

— Պարոն բերդակալ, իսկ պահակները երբ
կըդուրս գան այս բերդից:

— Պահակները:

— Այն, պահակները:

— Ի՞ն, պարոն, բերդի բոլոր պահակներն
արդէն գուրսն են:

— Երեւի թէ պարոն բերդակալն ինձ չը-
հասկացաւ, և կամ թէ ես պարզ չպայտնեցի
իմ միտքը: Իմ հարցմունքն այս էր, թէ երբ

մտադիր են դուրս դալ բերդից պահակները:
— Ընդհակառակն, սիրելի, դուք շատ պարզ
յայտնեցիք ձեր միտքը, և ես առանց զժուա-
րութեան հասկացայ: Ուստի կրկնում եմ, որ
ինձ հետ ամբողջ պահակը դուրս է չոգած:

— Սուրբ Առտուած, իրան էք ասում:

— Հարկաւ, և այդ ստորդ է, որովհետեւ ես
մենակ էի բերդի մէջ:

— Վայ ինձ թշուառիս, աղաղակեց Բօդը-
մօն գնդապետը, դուք ինձ ծաղրում էք: Այս
վատթար խարէութիւնը ինձ համար մահ է:
Դուք խայտառակում էք ինձ ամբողջ Ֆրանսիայի
առջեւ. այսուհետեւ ինչպէս երկնամ ես Փարի-
զում... այն կնոջը... ուզում եմ առել նրանց աչ-
քին, որոնց համար ապրում եմ: Հապա ընկերներս.
որքան պիտի հեգնեն ինձ: Լաւ չէր լինիլ, որ
բերդի փլատակների տակ մեռնէի, քան թէ այս
ամօթին հանդիպէի: Եւ դու, կորսիկեան բար-
բարոս, ինչպէս յդացար այս դիւալին խորհուր-
դը, այս անջնջելի նախատինքը մի ֆրանսիա-
կան սպալի դէմ:

— Այդ ձեր զիտնալու բանն է. ձեր ճարը
ինքներդ տեսէք: Իմ բանն էր միայն բերդից
դուրս գալը:

Զիակոմօ Կաչէլլան, իբրև մի ալեոր կար-
սիկացի, այս բոլորն անդրդուելի լրջութեամբ

ասաց: Յատկապէս այդ էր պատճառը, որ դէպ-
քին ականատես զօրքի մէջ մի անդսպելի ծի-
ծաղ բրդաւ. զունադեռներն անզամ, չնայելով
որ շրթունքները կծոտում էին, չկարծողացան
դիմանալ և բարձրաձայն քրքիջ հանեցին: Այս
սաստիկ աղաղակից Բոդըմօն գնդապետի երեսի
գոյնը յանկարծ թռաւ, յետոյ հրաշէկ գարձաւ
— ասես թէ նրան մի ասպակ տուած լինէին.
վերջապէս նա զրեթէ խելագարօւած մարդու
նման աչքերը շրջեց և գոռաց մոլեղնաբար.

— Այ դու անդգամ: Իմ բանը պլծել է.
բայց վրէժս չհանած ես չիմ մեռնիլ: Չարը տա-
նէ ձեր պայմանները և դժոխքն ընկնի քո
դլուխը:

Այս ասելով նա հանեց սուրն և ուզում էր
Զիակոմօի զանգը ճեղքել, երբ յանկարծ մի ան-
վանելի զօրութիւն նրա ձեռքից սուրը շորթեց,
կոտրեց ու դէն ձգեց: Նոյն բոպէին ամեն կող-
մից սկսան գոռալ — մատնութիւն, մատնութիւն,
և մօտակայ տների միջից զանազան մարդիկ
դուրս վազեցին: Ոմանք էլ պատուհաննե-
րից դուրս ցաթկեցին, և այսպէս գրոհ տալով
վրայ հասան հռոմէական զինուորները, Յուղան,
Հերովդէս թագաւորը, Պիղատոսը, Կալիափան,
առաքեալներն և Յիսուս Քրիստոսը — սպանելու
կամ մեռնելու խանդով վառուած: Արեան ճա-
չազէ, նօնցայի բերդը:

պաղիք կըհոսէին անշուշտ, և բոլորովին զուր տեղը, եթէ Նախախնամութիւնը հանած չըլինէր Դր Գոանմէզօն քաջարի կոմսին այն տնից, ուր նա կանդնել էր բանակցութեան միջոցին: Նա խակոյն ըմբռնեց վտանգի մեծութիւնը և նոյն բոպէին հրամայեց զօրքին յարձակուողների դէմ ճակատ կազմել և յառաջ ուղղուած սուխներով անշարժ սպասել նրանց բախմանը: Առաջին կոր կատաղութիւնն այսպէս զսպելուց յետոյ՝ նա բարձր ձայնով հարց ու փորձ արաւ շփոթութեան բուն սպատճառի մասին և ասլա թէ վոտահութիւն տուաւ, որ դաշնադրութեան բոլոր պայմանները լիովին կըկատարուին և գնդապետն էլ պատիժ կըստանայ, եթէ միայն չընորոգուի ազմուկը: Եւ տեսնելով, որ ամենակարճ յապադումն անդամ կարող էր ահազին վնաս ըելին, — նա արագ մտաւ շըջանի մէջ և մի քանի սաստիկ խօսքով սպատուիրեց Բօդրմօն գնդապետին — լրեն տալ սուրը, և յետոյ հրամայեց հեռացնել նրան, ըստ երևութին կալանելու, բայց իրօք՝ ամենի խուժանից փրկելու համար: Եւ տեսնելով պարոն ֆիակոմին, նա սկսաւ ամեն տեսակ շողոմարար գովութիւններ շռապել նրան, որ սակայն ծերունին ոչ ընդունեց, ոչ էլ մերժեց. այլ նա հանդիսաւ կանդնած էր, անքթիթ-

նայելով կոմսի երեսին: Այս տեսարանից սպարապետը շփոթուեցաւ և վերջապէս հարցըց, թէ արդեօք ինչ բանով կարող է հաճոյ լինել պարոն բերդակալին: Պարոն ֆիակոմօն բերանը բաց արաւ և ասաց.

— Ոչինչ բանով, պարոն սպարապետ, բայց եթէ մեր դաշնադրութիւնը ճիշդ կատարելով և ինձ խակոյն սալլեր ու դրաստ տալով, որպէս զի կարող լինիմ Պուրատո տանել մեր պատերազմական անօթները, զէնքն ու պաշար:

Սպարապետը շատ բանաւոր գտաւ այդ լինդիրն և պատասխանեց, թէ յօժար է խակոյն կատարել նրան, բայց թէ կըփափագէր, որ պարոն բերդակալը նրա մօտ ճաշ վախելու շնորհ բերէ:

Պարոն ֆիակոմօն այսպիսի սիրալիք քաղաքավորութիւնից դորովելով, մի քանի վայրկեան լուռ մնաց և յետոյ պատասխանեց աւելի վշտահար, քան դժողով դէմքով.

— Պարոն սպարապետ, մինք ըիրտ կորսիկացիներս ձեզ պէս ազնուականների նուրբ սովորութները չգիտենք, և ես արդէն շատ ծեր եմ այդ բաները սովորելու համար: Ուստի թով տուէք, որ ես մեր եղանակին հետևիմ: Կորսիկայում մենք սովոր չենք թշնամիների հետ ոհան վայելել, այլ սովոր ենք միայն մարտնչել

Նրանց դէմ: Մենք, որ չքաւոր ու սակաւալետ մարդիկ ենք, կարող ենք վնասուիլ ձեր ձոխ ու փարթամ ճաշերից: Այս մի կտոր հացը —և նա զրաբանից մի պատառ հաց հանելով ցոյց տուաւ կոմսին —մեր պարէնի վերջին մնացորդը հերիք է ինձ մինչև որ հասնեմ Մուրատօ:

Երբ որ ամբոխի յաւզմունքը փոքր ինչ շիշաւ, կոմսը ուզեց իմանալ, թէ ինչ տարօրինակ բերմամբ և որ տեղից էին դուրս եկել այն ինենդի շորերով մարդիկը: Նրան պատմեցին այլանդակ զգեստաւորութեան պատճառը, և երբ նու իմացաւ, որ Յօդըմօն գնդապետի սուրը փըշրողը Յիսուս Քրիստոսի հրազէնից թռած հարուածն էր, —այս մասին շնորհակալ եղաւ Ֆիդէլիօին և թէ նրան և թէ բոլոր թատրօնական խումբը իւր մօտ ճաշի հրաւիրեց: Սակայն դերասանները շնորհակալութեամբ բացասական պատասխան տուին, և կոմսին ուրիշ բան ըլմաց անելու, բայց թէ կատարել դաշինքում լիշուած պայմանները, —որ և հոգաց ամենայն ճշգութեամբ:

Այս տեղ ծերունին լոեց և արդէն մտադիր էր գնալ, բայց ես նրա ձեռից մեղմ քաշելով ստիպեցի որ մնալ:

— Իսկ Զիակոմօ Կաչէլա դնդապետն ինչ եղաւ, հարցը ես:

— Զիակոմօ դնդապետը, շարունակեց ալւորը, իսր թնդանօթների հետ միասին հանգիստ ու քաջ Մուրատօ գնաց: Ուր և հասնէր, մերձաւոր ու հեռաւոր զիւղերի ժողովուրդը վազաւ էր նրան ողջունելու և նրան զովասանք կարդալու: Սակայն նա մռացը ու մունջ յաւած էր գնում: Երբ նա Մուրատօ ժամանեց, վանքում բնակուող զօրավարը շուտ վայր իջաւ սանդուղքից և համբուրեց նրան բազմութեան առջեւ, որ բերկրապատար Հըրմառանքից մերթ ծափ էր տալիս և մերթ կեցցէ որոտում: Իսկ գնդապետը զուարթանալու իուխարէն՝ ևս աւելի տրտմեցաւ և հազիւ պատասխան տուաւ. Համբուրին: Յետոյ զօրավարի խուցը մտնելով լաց եղաւ խեղճ Զիակոմօն և առաց արտասուադին:

— Զօրավարդ իմ, ես եկել եմ երկու բան խնդրելու ձեզնից:

— Սրտանց յօժար եմ կատարել. բայց լաւ է՝ իսկոյն և եթ երեք բան խնդրիք:

— Նախ և առաջ խնդրում եմ արձակել ինձ:

— Ինչ, ինչ առացիր: Կամենում ես թողնել հայրենիքդ, հէնց այժմ թողնել, երբ նա աւելի քան երբ և իցէ քո օղնութեան կարօտ է:

— Արդարէ. բայց ինչով կարող եմ օղնել նրան: Սեպտեմբեր ամսին իմ եօթանստունչորս-

երորդ տարին կըլլանայ. ես միայն մի ոտն ու-
նիմ. հին վէրքերս չեն թողնում, որ գէթ մի
գլշեր հանգիստ քնեմ: Ինքներդ էլ տեսնում
էք, զօրավար իմ, որ այս հալօքս ես այլ ևս
չեմ կարող պիտանի զինուոր լինել կռուի
դաշտում:

— Բայց ես չեմ էլ ուզում, որ գու դաշ-
տում ձառակես:

— Գէ ուրեմն, Տէր Յիսուս, էլ ինչ բանի
կարսդ եմ պէտք գալ: Գուցէ բերգեր պաշտպա-
նելու: Կօնցայի անձնատուր լինելուց յետոյ ես
չգիտեմ, թէ արդեօք ձեր անխոհեմութիւնն
աւելի պարսաւելի կըլինէր,—եթէ ինձ կրկին ո՞ր
և է բերդ յանձնէիք,—թէ իմ սկերեսութիւ-
նը, եթէ ես յանձն առնէի:

— Կօնցայի բերդը գու իբրև դիւցաղն
պաշտպանեցիր: Աղազայում քո անունը միշտ
Կօնցայի անուան հետ կապուած կըմնայ. վըս-
տահ եղիր այս մասին:

Սակայն Քիակոմօն թոյլ ըրտուաւ զօրա-
վարին խօսքն աւարտել և զլուխը թօթուելով
ընդիջեց նրան.

— Խեղճ ես գու, ով իմ թշուառ ու չա-
րաբախտ հալլենիք, եթէ մի այսպիսի բերգի
կորուսոր քեզ փառք բերսդ բան պիտի համա-
բախ: Ես մտադիր էի այս մասին ներողու-

թիւն խնդրել ձեզնից, և այս էր իմ երկրորդ
խնդիրը, որ կ'ուզէի յայտնել ձեզ, զօրավար:
— Ի՞նչ ներողութիւն. ինչե՞ր ես ասում.
ինչ ափեղ ցփեղ բաներ են մտնում զլիսիդ մէջ:
Ես դարձեալ կրկնում եմ, որ գու անմահական
փառք ես զրաւել: Կամ թէ ասա—այլապէս ինչ
կըմնար քեզ անել:

— Ինձ կըմնար մեռնել բերդի փլատակ-
ների տակ:

— Եւ ինչ օգուտ կըլինէր դրանից: Գեղ հետ
միասին բերգում եղած զինուորները աւելի առաջ
այստեղ հասնելով՝ պատմեցին ինձ, ինչ որ պա-
տահել էր Կօնցայում: Կըանց յառաջ բերած
հիմքերը ես այնպէս բանաւոր, խելօք և ար-
դար գտայ, որ եթէ զինուորականը կարդապա-
հութեան հաշիւը ըստիպէր ինձ կալանել
նրանց, — բոլորին էլ մի մի պարզե կըտաիր.
բայց այս յետոյ էլ կարող եմ անել:

— Սակայն նրանք իմ սիրտն էլ հէնց այդ-
պէս որսացին, և այդ է ամենավատը: Իմ պա-
հապան հրեշտակը երիտասարդի արլւն էր ածել
այս զառամած ջիղերիս մէջ,—այս եօթանասուն-
չորս ամեալ սիրտս վառսւել էր հայրենասիրու-
թեան ամենասուրբ կըալով, և ես արդէն սկսել
էի հերոսական մահուան նախաբերկրանքը
վայելել: Բայց խելօքութիւնը, նզովից ար-

մատ խելօքութիւնը, որ ամեն տկար որոշումների մալրն է և ամեն վեհանձն վճռների գործանիչը, — տուս քանդեց: Երէկ չէ միւս օր, առաւտեան պահուն, մինչ արեց նոր էր շողացել մեր բերդի վրայ, ես գնացի զինուորների կացարանն և դատարկ գտայ նրան: Այդ միջոցին էր, որ մի նամակ նշանարեցի սեղանի վրայ: Նամակը բաց էր: Զէ թէ կարդալ, այլ պէտք էր այրել նրան լապտերի վրայ, որ տակաւին չէր հանգել. սակայն տես որ կարդացի նրան, երկու անդամ կարդացի — և մտածութեան մէջ ընկայ: Երկար մտածելուց յետոյ, երբ ես մոլորուած գլուխս կրկին վերցրի, — կարծես թէ բնից թռչող աղաւնու թևեր բախեցին օդը. ես զարհուրեկով շուռ եկայ. ոչ ոք չկար — նա ինձ թողել էր:

— Ո՞վ էր թողել, հարցրեց զօրավարը, մտածելով որ Տիակոմօ գնդապետի գլուխը այլ ես կարդին չէ: Եւ ծերունին պատասխանեց.

— Պահապան հրեշտակս, որ ինձ խելօքութեան ձեռքը մատոնեց, ինչպէս որ մի գառն են մատնում բուրդ խուզողին: Ահա այդ բոպէին էր, որ հանձարեղ բան երևեցաւ ինձ բանակցութեան միջոցով մեր թնդանօթներն և քառասուն կենդինար վառօդը թշնամու ձեռքից փրկելու միաքը, որ և կատարեցի: Գուցէ եր-

կիւղն էլ մասն ունէր այդ հաշուի մէջ, և գուցէ դա էր, որ գրգեց ինձ ազատելու այս իմ թշուառ դիակը, ասես թէ սա մի պանծալի բան լինէր...

Եւ այս ասելով նա ուժգին խվեց իւր կրծքին:

— Բայց և այնպէս, ծերունի, քո անձնուիրութիւնը փառաւոր գործ էր և մեզ համար շատ օգտավէտ:

— Մի ասէք այդ, Պասքալէ, որովհետեւ կամ առանց մտքերդ կշռելու խօսած կրլինիք, և կամ թէ մի այնպիսի բան ասած, ինչ որ բնաւ չէք մտածում: Ոչ թնդանօթները, ոչ հրացանները, ոչ էլ քառասուն կենդինար վառօդը կարող են փրկել Կորսիկան. մինչ դեռ յուսահատ հայրենասիրութեան միայն մի վեհանձն օրինակը բաւական կրլինէր այն սրբազն հուրը վառելու կորսերի սրտում, — այն հուրը, որ իսկոյն այրում, լափում և աճիւն է դարձնում ամեն մի տնալին հոգ, արծաթի սէր, գոյքերի տենչ, ինքնապահութեան եսական կրբք: Առանց Թէրմօպիլքի — Յունաստանը մինչեւ այս օր էլ Մարաթօնին կըսպասէր: Արդ, Պասքալէ, կրկնիր ինձ, եթէ սիրտ ունիս, թէ Տիակոմօ գնդապետը մի փառաւոր բան արաւ, որ փոխանակ իւր մահով թշնամուն սարսափի

և ընկերներին խրախոյս տալու՝ աշխարհիս երեսին հանգիստ ապրելլ նախամեծար համարեց:

—Ես սիրում եմ զգաստ ու հաշուասէր գլուխներ. ոգևորութեան կրակը բորբոքում է, բայց երկար չէ տևում, ասաց գօրավարը:

—Սիրելի Պասքալէ, դուք շատ երկար չէք հետեւիլ այդ կարծիքին: Առ այժմ լսեցէք, ինչ որ ասում է ձեր ծերունի ազգականը —վախեցէք շատ մտածող, հաշիւ անող մարդկանցից: Այդպիսիների ձեռքով ոչ մի ժամանակ ազատութիւնը չի յաղթիլ բռնութեան: Եթէ երկու հարիւր հազար կորսերը թուաբանօրէն մտածել սկսեն, նրանք կրզզուշանան քսանհինդ միլիոն թշնամու դէմ մարտնչել, և տեսնելով, որ յաղթելն անհնարին է, անձնատուր կըլինին: Սակայն երկնքից էլ հրաշք մի սպասէք, եթէ սիրու չունիք ինքներդ հրաշք գործելու երկրի վրայ: Եւ հարկաւ, աշխարհիս այժմեան ընթացքին նայելով՝ հրաշք կըլինէր այսօր մի քաջասիրտ մարդ դտնելը, որ բռնէր իւր կեանքն ու պէտք եղած ըոպէին բախտի երեսին շպրտէր:

Այս խօսքերից լետոյ անկարելի էր ստիպել նրան, որ զօրքի մէջ մնալ: Եւ որովհետեւ դաշնադրութեան պայմանով նա իրաւունք չունէր այդ պատերազմում ֆրանսիացոց դէմ կըռ-

ելու, —որ ամօթից չէր խոստովանել զորավարին, —ուստի զնաց իւր Նօնցալի մօտերքում եղած ազարակն և առանձնացաւ իւր սենեակում, որ նայում էր գէպի սարը: Այնուհետեւ նա իւր բարեկամներից ու ազգականներից ոչ ոքին չուզեց տեսնել և տնից էլ դուրս չելաւ, մինչև որ նրա դին դուրս չտարին: Իւր հրիտակի մէջ նա կտակել էր, որ նրան հովտում թաղեն, ընկուղենիների սգաւոր ստուերի տակ, ուր ծերպերից վայր իջնելով լեռնացին կարկաջասահ ջրեր են հոսում: «Որովհետեւ, զրել էր նա կտակի մէջ, երբ որ հոգիս գերեզմանից դուրս գալու լինի օդ շնչելու, —ես չեմ կամենում, որ նա վատօրէն պաշտպանուած Նօնցալի պատկերին հանգիպի ու վշտանայ»:

—Եւ ինչ եղան հայր Սետէմբերէն, Զիօվանի Մաթէին և Ֆիդէլիօ Փաբրիցին, հարցը ես:


—Այդ թող ուրիշները ձեզ պատմեն, ասաց ալւորը: Ես կ'աւելացնեմ միայն, որ նրանք կորսերին վայել մահով մեռան: Ահա պատմութիւնս վերջացաւ. իմ զառամեալ հասակն ու խոնարհուող աստղերը հրաւիրում են ինձ նընջելու: Բարի գիշեր ձեզ, բարեկամ: Եթէ Աստուած կամենաց, մենք վերստին կըտեսնուինք —միւս աշխարհում:

Նա տուաւ ինձ իւր աջը, որ ես սիրով սեղմեցի. և երբ նա հեռացաւ, ես այն զգացի, ինչ որ զգում ենք մի հին ընկերից զրկուելիս:



Ա Բ Ի Պ Ա Կ Ն Ե Բ

| ԵԶ | ՏՐԴ | ՍԻՄԱԼ | ՌԵԴԻԴ |
|-----|-----|---------|--------------|
| 67. | 2 | ներքելց | հապճէպ |
| 71. | 10 | վերևելց | կոյն |
| 75. | 8 | » | չենք կարող |
| 76. | 4 | » | քան ստիպելով |
| » | 12 | » | դուարթ ենք |
| | | | զուարթ ենք, |



304

0024189

2013



ՀՀ Ազգային գրադարան

